

ՆԱԽԱԳԱՀ ԱՌԻՆ ԴԵՍՊԱՆ ԹԱՐԱՅԻՆ ՅԱՅՏՆԵՑ ԼԻՔԱՆԱՆԻ ՋԱՐՄԱՆՔԸ ՍՈՒՐԻԱՅԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԱԾՆԵՐՈՒՆ ԱՌՆՉՈՒՈՂ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՋԵԿՈՒՑՈՒՄԻՆ ԳԾՈՎ

Հանրապետության Նախագահ զոր. Միշել Աուն երեկ Պաապտայի պալատին մեջ ընդունեց Լիբանանի մեջ Երոպական Միության պատվիրակության Նախագահի ղեսպան Ռալֆ Թարաֆը: Նախագահը յայտնեց Լիբանանի զարմանքը՝ 9 հոկտեմբերին Երոպական խորհրդարանի արտաքին գործոց եւ ամավարկի յանձնախումբերուն միացեալ հաղորդագրութեան բովանդակութեան վերաբերեալ, որ կ'արծարծեր սուրիացի տեղահանուածներուն հարցը եւ անհրաժեշտ կը նկատեր հիւրընկալող հասարակութիւններուն հետ անոնց երկարաժամկետ համարկման եւ աշխատելու կա-



րողութիւններու ապահովումը համահունչ ձեռով:
Նախագահ Աուն յայտնեց, որ այս կեցածքը կը հակաւե Լիբանանի կրկնակի

Շար.ը՝ էջ 2

ՀԱՍԱԺՈՐՈՎՐԱԿԱՆ ՑՈՅՑԵՐՈՒՆ 23-ՐԴ ՕՐԸ

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ԵՒ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵՆ ԲՈՂՈՔԻ ՑՈՅՑԵՐ ԿԱՏԱՐԵԼ



Համաժողովրդական ցոյցերուն 23-րդ օրը՝ երեկ, դպրոցներուն աշակերտները եւ համալսարանական ուսանողները շարունակեցին իրենց շարժումները՝ կանգնելով ժողովրդային շարժումին առաջին շարքերուն վրայ:

Սայտայի մէջ խումբ մը ցուցարարներ բողոքի ցոյց կատարեցին Կեդրոնական դրամատան մասնաճիւղին առջեւ՝ «Սղութիւնը մեզ կերաւ» կարգախօսով:
Ժիպէլի մէջ խումբ մը աշակերտներ եւ ուսանողներ բողոքի ցոյց կատարեցին Ընկերային ապահովագրութեան ազգային սնտուկին կեդրոնատեղիին առջեւ՝ բարձրաձայնելով կարգախօսներ ազգային երգերու կշռոյթին տակ:
Ժիպէլի մէջ աշակերտները բողոքի ցոյց կատարեցին Նաեւ «Ալֆա» ընկերութեան առջեւ:
Նախորդող օրերուն նման աշակերտա-

կան բողոքի ցոյց կատարուեցաւ ԵՌՆԵՍ-ԶՕ-ի շրջանի կրթութեան Նախարարութեան կեդրոնատեղիին առջեւ: Աշակերտները կը պահանջէին արժանապատիւ կէտնք եւ անէլ լաւ ապագայ իրենց եւ երիտասարդներուն համար, յատկապէս գործի առիթներու ստեղծում: Անոնք բարձրացուցած էին իրաւանեան դրօշակները եւ կ'արձակէին ժողովրդային շարժումին զօրակցող կոչեր:

Ժտէլտիի մէջ Լիբանանեան համալսարանի տարբեր բաժանմունքներու ուսանողներ բողոքեցին արդարադատութեան պալատին դիմաց:
Լիբանանեան համալսարանի ընկերային գիտութեանց, իրաւաբանութեան եւ գրականութեան բաժանմունքներու ուսանողները զօրակցական հաւաք կազմակերպեցին համալսարանի մուտքին: Տարակարծութիւններ ստեղծուեցան ցոյցի աջակիցներուն եւ մերժողներուն միջեւ:

Շար.ը՝ էջ 2

5,9 ԱՍՏԻՃԱՆ ՈՒԺԳՆՈՒԹԵԱՄԲ ԵՐԿՐԱՇԱՐԺ ՍԸ ՀԱՐՈՒԱԾԵՑ ԻՐԱՆԻ ՀԻՄՆԻՍ-ԱՐԵՄՈՒՏԸ

Իրանի պետական պատկերասփիւռի կայանը հաղորդեց, որ ըստ Նախնական տուեալներու, չորս անձեր մահացած են եւ 70 ուրիշներ վիրաւորուած, երբ «Միջին» ուժգնութեամբ երկրաշարժ մը հարուածած է Իրանի հիւսիսարեւմտեան շրջանը:

5,9 մաստիճան ուժգնութեամբ երկրաշարժին կեդրոնը կը գտնուի Արեւելեան Ատրպատական Նահանգին մէջ 8 քիլոմէթր խորութեան վրայ եւ Թաւրիզ քաղաքէն 120 քիլոմէթր հարաւ-արեւելք:

Իրանի Արեւելեան Ատրպատական Նահանգին մէջ արտակարգ իրավիճակներու կառավարման կեդրոնի Նախագահ Սոհամեդ Պաքեր Յոնար յայտնեց, որ երկրաշարժի շրջան ուղարկուած են առնուազն



ութ փրկարար խմբակներ: Երկրաշարժը տեղի ունեցաւ տեղական ժամանակացոյցով առաւօտեան ժամը 2:17-ին:

ԻՐԱՆԸ լրատու գործակալութիւնը յայտնեց, որ մասամբ ուժեղ նկատուած երկրաշարժը քաղաքացիները մղած է սարսփափափար խախուստ տալու իրենց բնակարաններէն:

ՓՈՍՓԷՕ. «ԻՐԱՔԻ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ ԺՈՂՈՎՈՐԱՆԵՐՈՒՆ ՊԵՏԸ Է ՕԳՆԵՆ ՁԵՐԲԱԶԱՏԵԼՈՒ ԻՐԱՆԵԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԵՆԷՆ»



Միացեալ Նահանգներու արտաքին գործոց Նախարար Մայք Փոմփեօ Պերլինի մէջ յայտարարեց, որ «պետք է դէմ դնել վարչակարգերուն, որոնք կ'ուզեն ազատութիւնները ճնշել»՝ անելցնելով. «Կ'ուզենք, որ մեր ժողովուրդները խաղաղ եւ ազատ ապրին»:
Փոմփեօ շեշտեց ծայրայեղականութեան դէմ պայքարելու Միացեալ Նահանգներու յանձնառութիւնը՝ անելցնելով. «Ուաշինկթըն ՏԱՅԵՇ խմբաւորման դէմ պայքարելու ռազմավարական որոշում տուաւ»:

Շար.ը՝ էջ 3

ՊԱՐԱՅԻ ՄԵՋ ՇԱՐՔ ՍԸ ՑՈՒՑԱՐԱՆԵՐ ՍՊԱՆՆՈՒԱԾ ԵՆ



Իրաքի Պասրա քաղաքին մէջ սպաննուած են երեք անձեր, իսկ ուրիշներ՝ վիրաւորուած: Այս մասին կը հաղորդէ «Մայատին» արբանեակային պատկերասփիւռի կայանը:
Իրաքեան զինեալ ուժերու ընդհանուր իրաւանատարի բանբեր հազարապետ-գորավար Ապտեյբարիմ Խալաֆ յայտնեց, որ «ճամբէ շեղած» կողմեր Պասրայի մէջ կրակ կը բանան քաղաքացիներուն եւ ապահովական մարմիններուն վրայ:

Շար.ը՝ էջ 3

ԹՈՒՐԵԻՎ ԶԱՅՐԱՑԱԾ Է ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԵՐԵԱՆԻ ՄԵՋ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԿԱՏԱՐԱԾ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵՆԷՆ



Թուրքիոյ արտաքին գործոց Նախարարութեան բանբեր Համի Աքսոյ արձագանգած է Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ Յունաստանի Նախագահ Փրոքոփիոս Փալուփուլոսի յայտարարութեան, որ վերջինս կատարած է Հայաստան կատարած այցելութեան ընթացքին: Այս մասին կը հաղորդէ «Երմենիհապեր» կայքը:

«Կը տեսնենք, որ Յունաստանը կը շարունակէ մնալ Թուրքիոյ դէմ թշնամաբար տրամադրուածներու շարքերուն մէջ եւ աշակցիլ մեր երկրին դէմ արտայայտուող տեսակետներուն եւ դիրքորոշումներուն», նշած է Աքսոյ:

Ան «ոյլներու կողմէ թուրքերու եւ այլ օսմանցի քաղաքացիներու դէմ վարագութիւններ գործելու» վերաբերեալ անհիմն պնդումներ ընելով նշած է, որ Աթենքը այսօր ալ ճնշումներ կը գործադրէ Յունաստան բնակող թուրք փոքրամասնութեան վրայ:

«Անգամ մը եւս յիշեցնենք, որ մեր երկրին դէմ ուղղուած գործունեութեան նկատմամբ ցուցաբերուող աշակցութիւնը երբեք օգուտ պիտի չտայ Յունաստանին», ըսած է Աքսոյ:

Շար.ը՝ էջ 3

ՀՅԴ ԲԻՒՐՈՅԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉԸ ՏԵՍԱԿՏԵՑԱՒ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՀԵՏ



ՀՅԴ Բիւրոյի Հանրային կապերու գրասենեակէն կը հաղորդեն, որ հինգշաբթի, 7 Նոյեմբերին, Երոպական ընկերվարական կուսակցութեան կեդրոնատեղիին մէջ, Երոպական ընկերվարական կուսակցութեան Նախագահ Սերկէյ Սթանիշեւ ընդունեց ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեանը՝ ընկերակցութեան ՀՅԴ Երոպայի Հայ դատի յանձնախումբի Նախագահ Գասպար Կարապետեանի:

Հանդիպման ընթացքին քննարկուեցան երկու կուսակցութիւններու համագործակցութիւնը շարունակելու կարելիութիւնները:

ՀՅԴ-ն, իբրեւ Երոպական Միութեան ոչ անդամ եւ կամ անդամութեան թեկնածու երկրի կուսակցութիւն՝ դիտորդի կարգավիճակով անդամ է Երոպական ընկերվարական կուսակցութեան:

ԱՐԾՈՒԿ ՄԻՆԱՍԵԱՆ. «ՈՉ ՈՔ ԻՐԱՒՈՒՆԸ ՈՒՆԻ ԿՏՐԵԼՈՒ ԱԶԳԱՅԻՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ»



8 Նոյեմբերին ՀՅԴ «Սիմոն Կրացեան» կեդրոնին մէջ տեղի ունեցաւ ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմնի անդամներ Արծուիկ Մինասեանի, Տարսն Տոնոյեանի եւ Աշոտ Սիմոնեանի մամլոյ ասուլիսը:

Շար.ը՝ էջ 3

ՀՅԴ ՀԵՄ-Ի ՆՍՏԱՑՈՅԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ ՎԱՐՉԱՊԵՏ ՓԱՇԻՆԵԱՆ ՏԵՍԱԿՏԵՑԱՒ ՆՍԱՑՈՅՑ ԿԱՏԱՐՈՂ ԵՐԻՏԱՍԱՐԳ-ՆԵՐՈՒՆ ՀԵՏ



ՀՅԴ Հայաստանի Երիտասարդական միութեան անդամները, որոնք 7 Նոյեմբերին սկսան բողոքի ցոյցի մը Հայաստանի կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմնակրթութեան Նախարարութեան շէնքին առջեւ, գիշերեցին հոն եւ իրենց ցոյցը շարունակեցին 8 Նոյեմբերին՝ Նախարար Արայիկ Յարութիւնեանի հրաժարականի պահանջով:

Ցուցարարներուն հետ զրուցեց վարչապետ Նիկոլ Փաշինեան եւ հաստատեց, որ ինք չի կիսեր Նախարար Արայիկ Յարութիւնեանի հրաժարականի պահանջը, գործերը կայացուցին դաշնակցական երիտասարդները:

Փաշինեան հարցուց, թէ ճիշդ ի՞նչ թեզերէ կը բողոքեն երիտասարդները՝ Նշելով, որ կրթութեան ոլորտին մէջ կատարուող փոփոխութիւնները ոչ թէ Նախարարութիւնը, այլ կառավարութիւնը կը կատարէ:

Շար.ը՝ էջ 3

ՈԱՅԻ ՊԱՏՐԻԱՐԷԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԱԿ-Ի ՄԱՐԴԱՎԱՅԻՆ ՋԱՐՁԵՐՈՒ ԳՈՐԾԱԿԱՏԱՐԸ



Մարոնիներու Պշարա Ռայի պատրիարքը երկ Պքերքի մէջ ընդունեց Լիբանանի մէջ ՄԱԿ-ի մարդկային հարցերու գործակատար Ֆիլիփ Լազարիին, որուն հետ ընկարկեց երկրին ընդհանուր կացութիւնը եւ Լիբանանի մէջ համակարգուած աշխատանքը:

Երկու կողմերը անհրաժեշտ նկատեցին վարչապետի նշանակումին արագացումը, որպէսզի կարելի ըլլայ նոր կառավարութիւն կազմել, քանի որ, ըստ անոնց, կացութիւնը փրկութեան կը կարօտի:

Հանդիպումէն ետք Լազարիի յայտնեց, որ առիթը ունեցած է պատրիարքին հետ ընկարկելու երկրին ներկայ կացութիւնը եւ երիտասարդութեան դերակատարութեան կարեւորութիւնը: Ան նշեց, որ երիտասարդական ներկայ շարժումը օրինակելի է:

Լազարիի նշեց, որ պատրիարքին հետ նաեւ խօսած է ժողովրդային շարժումը խաղաղ եւ քաղաքակիրթ պահելու կարեւորութեան մասին, որպէսզի կարելի ըլլայ ցոյցերը նոյն ձեւով շարունակել: Ան յայտնեց, որ ինք պատրիարքին յայտնած է, թէ Լիբանանը իբրեւ օրինակ ծառայեց կարգ մը խաղաղ ցոյցերու, միեւնոյն ատեն զինուորական հաստատութիւնը յաջողեցաւ պահպանել այս շարժումը: Ան շեշտեց, որ պէտք չէ ժամանակ վատնել, եւ խստօրէն անհրաժեշտ է լիբանանցիներուն ու անոնց ներկայացուցիչներուն միջեւ վստահութիւնը վերականգնել:

ՊԱՍԻԼ Կ'ԸՆԴՈՒՆԻ ՖՐԱՆՍԱՅԻ ԵՒ ԱՐԱՐԱԿԱՆ ՄԻԱՅԵԱԼ ԸՄԻՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԴԵՄՊԱՆՆԵՐԸ



Արտաքին գործոց նախարարի պաշտօնակատար Ժըպարան Պասիլ ընդունեց Ֆրանսայի դեսպան Եմաուել Ֆուշէն եւ Արաբական Միացեալ Եմիրութիւններու դեսպան Համատ Սայիտ Շամիսին, որոնց հետ ընկարկեց երկրին մէջ տիրող ընդհանուր կացութիւնը: Բոլորն ալ համաձայն գտնուեցան, որ անհրաժեշտ է արագացնել կառավարութեան կազմութիւնը՝ դիմագրաւելու համար տնտեսական եւ ապահովական մարտահրաւերները:

ՊԱՍԻԼԻ ՄԱՍԻՆ ԵՂԱԾ ԼՈՒՐԵՐ

Միւս կողմէ, արտաքին գործոց նախարարի պաշտօնակատար Ժըպարան Պասիլի փաստաբան Մաժիտ Պուէյժ հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ նշեց, որ կարգ մը լրատուամիջոցներ հրապարակած են լուր մը, ըստ որուն փաստաբան մը ընկերական ընդհանուր դատախազութեան մօտ դատ բացած է Ժըպարան Պասիլի դէմ՝ ենթադրեալ եւ անհիմն յանցանքներու մեղադրանքով: Փաստաբանը նշեց, որ այս սուտ լուրը կը վերաբերի Ժըպարան Պասիլի կողմէ ենթադրեալ շահաբաժին առնելուն՝ Զաթարի տրամադրած նուիրատուութենէ: Ըստ փաստաբանին, այս կեղծ լուրը լոյս տեսած էր «Տիար» օրաթերթին մէջ, ինչպէս նաեւ նոր բացուած դատին մէջ: Ան բացատրեց, որ նախարար Պասիլ դատ բացած էր լուրը հրապարակողին դէմ, որ արդարադատութեան առջեւ խոստովանած էր, որ այդ լուրը կեղծ է, եւ գրաւոր ձեւով արձանագրած եւ ստորագրած էր ատիկա:

Ան նշեց, որ կան այլ անհիմն լուրեր՝ ելեկտրականութեան մարզին մէջ ենթադրեալ շահաբաժին առնելու վերաբերեալ, յայտնելով, որ դատը բացուած են այդ սուտ լուրերը տարածողներուն դէմ եւ վճիռներ արձանակուած են՝ տրուած ըլլալով, որ փաստուած է, որ լուրերը կեղծ են, եւ ոմանք ալ չեն կրցած իրենց մեղադրանքները ապացուցող թուղթեր ներկայացնել:

«ԱԶԴԱԿ»-Ի ՖՈՒՆՏԻՆ

- Լիբանանի ներկայ պայմաններուն մէջ քաջալերելով «Ազդակ»-ի աշխատանքները՝ Կիպրոսի մեր ընթերցողները կատարած են հետեւեալ նուիրատուութիւնները.
- | | |
|------------------------------|----------|
| Ազգային մը | 300 \$ |
| «Արձագանգ» | 300 եւրօ |
| Սեպուհ Արմենակեան | 200 եւրօ |
| Լիմասոլէն խումբ մը ընկերներ | 200 եւրօ |
| Սկօ եւ Յասմիկ Գույումճեան | 100 եւրօ |
| Նիկոսիայէն խումբ մը ընկերներ | 70 եւրօ |
| Արթօ եւ Վերա Դալիթեան | 50 եւրօ |
| Յակոբ Մանուկեան | 40 եւրօ |
| Սեւակ եւ Սարին Կիւրիւնլեան | 20 եւրօ |
| Չաւէն եւ Շուշիկ Պազգալեան | 20 եւրօ |
| Ճորճ եւ Դալար Թորոսեան | 20 եւրօ |
| Ազգային մը | 20 եւրօ |

ԺԱՀԺԱՀ. «ԵՐԿՐԻՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ Կ'ԱՊՐԻՆ ԱՅԼ ՄՈԼՈՐԱԿԻ ՎՐԱՅ»

«Կը թուի, որ երկրին ղեկավարները կ'ապրին այլ մոլորակի վրայ, առանց որեւէ նոր կառավարութեան կազմութեան նշոյլի, հակառակ անոր, որ երկիրը կը դիմագրաւէ տնտեսական տագնապ», յայտնեց Լիբանանեան ուժեր կուսակցութեան ղեկավար Սամիր ժահժահ: Ան նախագգուշացուց, որ ընկերային ինդիքներ կրնան ծագիլ, եթէ առաջին անհրաժեշտութեան ապրանքներու նուազում յառաջանայ:

Ժահժահ «Ռոյըրըզ» լրատու գործակալութեան հետ հեռաձայնային հարցազրոյցի ընթացքին յայտնեց, որ տագնապէն միակ ելքը կուսակցութիւններէ անկախ կառավարութեան կազմութիւնն է, ինչպէս որ կը պահանջեն ցուցարարները, որոնք կը բողոքեն իշխող խաւին դէմ:

Ան ընդգծեց, որ տակաւին արդիւնքներ չկան կառավարութեան կազմութեան խորհրդակցութիւններէն՝ նշելով, որ քաղաքական գործիչները այնպէս մը կը վարուին, որ բան չէ փոխուած ցոյցերու սկիզբէն ի վեր:

Ժահժահ անցուց, որ անընդհատ կը յառաջանան տագնապներ՝ վառելանիւթի տագնապ, ալիւրի տագնապ, դեղերու



եալ, ինչ որ պիտի յանգեցնէ ընկերային մեծ տագնապի:

Ժահժահ Հըզգալլան մեղադրեց նոր կառավարութիւնը հրաժարեալ կառավարութեան նման կազմելու փորձին համար՝ յայտնելով, որ Հըզգալլա կը պնդէ, որ կառավարութեան մէջ ներառուի իր քրիստոնեայ դաշնակիցը՝ Ժըպարան Պասիլը:

Ան յայտնեց, որ եթէ Հարիրի յաջողի անկախ կառավարութիւն մը կազմել, ապա Լիբանանեան ուժեր կուսակցութիւնը իր աշակցութիւնը պիտի ցուցաբերէ անոր վարչապետի պաշտօնին համար: Ժահժահ նշեց, որ մասնագէտներէ բաղկացած անկախ կառավարութեան կազմութիւնը տագնապէն դուրս գալու միակ ելքն է:

ՄԻՋԱԶԱՎՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԻՐԵՆՑ ՍՏԱՅՈՂՈՒԹԻՒՆ ԿԸ ՅԱՅՏՆԵՆ ՅՈՅՑԵՐՈՒՆ ԵՐԵԱՎՆԵՐՈՒ ՄԱՍՆԱԳՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ՝ ԱՌԱՆՑ ԻՐԵՆՑ ԾՆՈՂՆԵՐՈՒՆ

Միջազգային կազմակերպութիւններ լիբանանեան իշխանութիւններուն յայտնեցին իրենց մտահոգութիւնը՝ ի տես 18 տարիքը չընդլրած պատանիներուն ժողովրդային ցոյցերուն մասնակցութեան՝ առանց իրենց ծնողներուն, նշելով, որ ատիկա կը հակառէ մանուկներուն առընչուող ՄԱԿ-ի ուխտին:

Այս կազմակերպութիւնները նշեցին, որ ՄԱԿ-ի ուխտը կը յիշեցնէ մանուկներու իրաւունքը ունենալու ըստանիք, ազատութիւն, արդարութիւն եւ խաղաղութիւն՝ առանց խտրակերպութիւն ընելու անոնց ցեղային, գոյին, կրօնական, քաղաքական, սեռային եւ ընկերային պատկանելիութեան առումով: Անոնք յայտնեցին, որ մանուկները պէտք է շրջապատուած ըլլան իրենց ըստանիքներով եւ պէտք չէ մասն ըստանիքի սահմաններէն դուրս՝ առանց ապահովութեան կամ անհրաժեշտ հոգատարութեան, որպէսզի առիթը ունենան դիմադրողականութիւն,



փորձառութիւն եւ պատրաստութիւն ստանալու՝ դիմագրաւելու կեանքի մարտահրաւերները:

Միջազգային կազմակերպութիւնները անհրաժեշտ նկատեցին, որ ծնողներ իրենց զաւակներուն ուղեկցին ըստանիքի ծիրէն դուրս կատարուած իւրաքանչիւր քայլին, որովհետեւ, ըստ միջազգային կանոնադրութեան, անոնք տակաւին չունին անհրաժեշտ դիմադրողականութիւնը եւ փորձառութիւնը՝ գտնուելու այնպիսի կացութիւններու եւ ուղղութիւններու մէջ, որոնց վտանգին չեն գիտակցիր:

ԱԾԱԿԵՐՏՆԵՐԸ ԵՒ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ...

Շարունակուած Ա. Էջէն



Պաապտաթի մէջ դպրոցական աշակերտներ հաւաքուեցան «Օժերօ» ընկերութեան դիմաց՝ պահանջելով փոխել կրթական ծրագիրները, պատասխանատուութեան ենթարկել փտածները եւ ապահովել արժանապատիւ կեանք ապրելու իրենց իրաւունքը, քանի որ իրենք երկրի ապագան են:

Սայտայի մէջ երրորդ օրն ըլլալով աշակերտներ եւ ուսանողներ հաւաքուեցան Էլիայի հրապարակին մօտ եւ պահանջեցին իրենց իրաւունքները իբրեւ քաղաքացիներ:

Ծիւնի մէջ սեփական եւ պետական վարժարաններու մեծաթիւ աշակերտներ ցոյցեր կատարեցին քաղաքի տարբեր կեդրոններուն առջեւ՝ Ելեկտրականութեան ընկերութեան շէնք, Լահանգապետարանի

շէնք, Ընկերային ապահովագրութեան գրասենեակ, հեռահաղորդակցութեան կեդրոն, Կեդրոնական դրամատան մասնաճիւղ, «Ալֆա» ընկերութիւն: Անոնք ինքնաշարժներով անցնողներն կը խնդրէին մասնակցիլ իրենց բողոքի շարժումին՝ ըսելով «ճակը կը ինքնուր, եթէ շարժումին հետ են»:

Կէսօրուան մօտ խումբ մը ցուցարարներ, մեծ մասը՝ աշակերտներ, փակեցին Ներքին գործոց նախարարութեան ճամբան՝ պահանջելով պատասխանատուութեան ենթարկել փտածները եւ կոչ ուղղելով քաղաքացիական պետութեան կազմութեան:

Խումբ մը աշակերտներ հաւաքուեցան Համրայի Կեդրոնական դրամատան առջեւ եւ ճամբան մասնակիօրէն փակեցին:

ՌԻԶԸՐՏ. «ՄԻԱՅԵԱԼ ՆԱՅԱՆՈՒՆԵՐ ՊԻՏԻ ԾԱՐՈՒՆԱԿԵՆ ՕԺԱՆԴԱԿԵԼ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԲԱՆԱԿԻՆ»



Պաշտպանութեան նախարար Էլիաս Պու Սաապ ընդունեց Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Էլիզապեթ Ռիչըրտը, որուն հետ ընկարկեց Լիբանանի մէջ տիրող ընդհանուր կացութիւնը եւ վերջին իրադարձութիւնները:

Ռիչըրտ իր կարգին հաստատեց, որ Միացեալ Նահանգներ պիտի շարունակեն օժանդակութիւններ տրամադրել լիբանանեան բանակին:

ՍԼԵՅՄԱՆ ՖՐԵՆԺԻԷ ԸՆԴՈՒՆԵՑ ԵԱՆ ԶՈՒՊԻՉԸ



Մարտառ հոսանքի ղեկավար Սլէյման Ֆրենժիէ երկ Պընաշի մէջ ընդունեց Լիբանանի մէջ ՄԱԿ-ի Ընդհանուր քարտուղարի անձնական ներկայացուցիչ Եան Զուպիչը՝ ներկայութեամբ Նախկին նախարար Ռոնի Արաբժիի եւ տղթթ. Ժան Պուլթրոսի: Հանդիպման ընթացքին ընկարկուեցան քաղաքական եւ տնտեսական վերջին զարգացումները, ինչպէս նաեւ անդրադարձ կատարուեցաւ ներկայ տագնապէն դուրս գալու համար առաջարկուած լուծումներուն՝ կառավարութեան կազմութեան եւ ժողովրդային շարժումի մակարդակներուն վրայ:

ՆԱԽԱԳԱՀ ԱՌԻՆ ԴԵՄՊԱՆ...

Շարունակուած Ա. Էջէն

Կոչին՝ սուրիացի տեղահանուածները իրենց երկիրը վերադարձնելու գծով, յատկապէս երբ իրավիճակը կայունացած է Սուրիոյ տարածքին աւելի քան 90 տոկոսին մէջ, եւ զինեալ ճակատումները մնացած են շատ սահմանափակ շրջանի մը մէջ:

Նախագահ Աուն դեսպան Թարաֆին վստահեցուց, որ կը շարունակուի սուրիացի տեղահանուածներու տունդարձի գործողութիւնը հանգրուանային ձեւով՝ նշելով, որ վերադարձողներուն թիւը հասած է 390.000-ի, եւ անոնք ոչ մէկ ճնշումի ենթարկուած են իրենց վերադարձէն ետք:

Նախագահ Աուն նաեւ յայտնեց, որ լիբանանեան խորհրդարանը պիտի սկսի ուսումնասիրել բարեփոխումներու օրինագիծերը, որոնք կը վերաբերին յատկապէս փտածութեան դէմ պայքարի հարցին, անձեռնմխելիութեան վերացման, նիւթական միսուրի համար մեղադրուողները պատասխանատուութեան կանչելուն եւ տուրքերէն խուսափելու հարցին: Նախագահ Աուն շեշտեց, որ նոր կառավարութիւնը պիտի աշխատի գործադրել հրաժարեալ կառավարութեան ներկայացուցած բարեփոխումներու ծրագիրը:

Դեսպան Թարաֆ իր կարգին յայտնեց Եւրոպական Միութեան երկիրներու հետաքրքրութիւնը Լիբանանի մէջ տեղի ունեցող վերջին իրադարձութիւններուն նկատմամբ եւ անոնց փափաքը, որ Լիբանան յաջողի դուրս գալ այս տագնապալի վիճակէն:

ՆԱԽԱԳԱՀ ԱՌՈՒ ՆԱՍԻՐ ԴՐԱՄՍԱՆԱՅԻՆ ԿԻՃԱԿԸ

Հանրապետութեան նախագահ գոր. Միշէլ Աուն այսօր յետմիջօրէին Պաապտայի պալատին մէջ նիստի հրաւիրած է Կեդրոնական դրամատան կառավարիչ Ռիատ Սալամէն, Լիբանանի մէջ Դրամատուներու միութեան նախագահ Սելիմ Սֆէյրը եւ միութեան վարչութեան անդամները:

Նախագահին կատարած խորհրդակցութիւններուն ծիրին մէջ տեղի ունեցաւ այս հանդիպումը կը միտի ընկարկել երկրին դրամատուային վիճակը տիրող իրադարձութիւններուն լոյսին տակ եւ գտնել միջոցներ լուծելու համար ներկայ կացութիւնը:



ՖՐԱՆՍԱՆ ՈՐՈՇԱԾ Է ՌՈՒՍԻԱՆ ԶՐԱԽԻՐԵԼ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՓԱՐԻԶԻ ՆՈՌ ՏԱՄ ՏԱՃԱՐԻ ՎԵՐԱԿԱՆՁՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ



Ֆրանսան մտադրության յայտնած է Ռուսիոյ յղելու այս տարուան ապրիլին Փարիզի մէջ մեծ հորդեհի պատճառով լուրջ վնասներ կրած Նորթ Տամ տաճարի վերականգնման աշխատանքներուն մասնակցելու: Այս մասին «ՌԻԱ Նովոսթի» լրատու գործակալութեան յայտնած է Ռուսիոյ նախագահի միջազգային մշակութային համագործակցութեան գծով յատուկ ներկայացուցիչ Միխայիլ Ըվիտըոյ: Ան նշած է, որ բանակցութիւններ տեղի կ'ունենան ամբողջ տարուան ընթացքին եւ ռուսական կողմը ինք պատրաստակամութիւն յայտնած է օգնութիւն տրամադրելու: Ըվիտըոյի համաձայն, այս ձեւով Փարիզ ընդունած է ռուսական գիտութեան արժանիքները: Յիշեցնենք, որ Փարիզի Նորթ Տամ տաճարի պատմութեան մէջ մեծագոյն հորդեհը տեղի ունեցած էր այս 15 ապրիլ 2019-ի երեկոյեան: Հրդեհին պատճառով փոշ եկած էին տաճարին տանիքը, աշտարակն ու ժամացոյցը, սակայն շէնքը, արուեստի գործերն ու տաճարին մէջ պահուող մատուցները պահպանուած են: Փրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոն յայտնած էր, որ Մոսկոյի եւ տաճարը վերականգնել 5 տարիէն:

ՓՈՍՓԷՕ. «ԻՐԱՔԻ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ...»

Շարունակուած Ա. Էջէն

«Սուրիոյ մէջ լուծումը քաղաքական է», ըսաւ ան՝ անցնելով. «Սուրիայէն չիեռացանք, եւ մեր ուժերը կը շարունակեն գտնուիլ սուրիական հողերուն վրայ»: Ամերիկեան դիւանագիտութեան պետը նաեւ յայտարարեց. «Պէտք է Իրաքի եւ Լիբանանի ժողովուրդներուն օգնենք ձեռքազատելու իրանեան ազդեցութենէն եւ իրագործելու իրենց ձգտումները»: Միւս կողմէ, Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութիւնը յայտարարեց, որ Ռուսիոյ արտաքին գործոց փոխնախարար, Ռուսիոյ նախագահի Միջին Արեւելքի եւ Աֆրիկէի հարցերով յատուկ պատուիրակ Միխայիլ Պոկտանով հանդիպում ունեցած է Ռուսիոյ մէջ Լիբանանի դեսպան Շարուքի Պու Նասարի հետ՝ վերջինիս խնդրանքով: Պոկտանով յայտնած է, որ կը զօրակցի Լիբանանի միութեան, գերիշխանութեան ու անկախութեան եւ «ազգային օրակարգի վրայ գտնուող բոլոր հարցերը լիբանանեան սահմանադրութեան ծիրին մէջ նոյնիմբն լիբանանցիներուն կողմէ լուծուելու կարելորդութեան»՝ շեշտելով. «Որեւէ ձեւով չարտօնել լիբանանեան հարցերուն մէջ արտաքին միջամտութիւնը»:

ԹՈՒՐԵԻԱ ԶԱՅՐԱՅԱԾ Է ՅՈՒՆԱՍՏԱՆԻ...

Շարունակուած Ա. Էջէն

Անդրադառնալով ցեղասպանութեան հարցին՝ թուրք պաշտօնատարը նշած է. «1915-ի դէպքերու հարցին մէջ Թուրքիոյ դիրքորոշումը արտայայտուած է նախագահ Էրտողանի վարչապետութեան շրջանին՝ 23 ապրիլ 2014-ին հրապարակած յայտարարութեան մէջ: Այլ բացատրութեան կարիք չկայ»: Յիշեցնենք, որ Յունաստանի նախագահը Հայաստանի Հանրապետութեան նախագահ Արմէն Սարգսեանի հետ միացեալ մամլոյ ասուլիսի ընթացքին անդրադառնալով Հայոց ցեղասպանութեան ու Պոստոսի յոյներու ցեղասպանութեան յայտարարած էր, որ Թուրքիան պէտք է հաշտուի իր պատմութեան հետ եւ պատասխան տայ:

ՄԱՐԱՇԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

2019-2020 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ ԿՐԹԱՆՊԱՍՏ

Այսու կը յայտնենք, որ Լիբանանի Մարաշի հայրենակցական միութեան վարչութիւնը սկսած է ընդունիլ ԿԱՐԻԶԱՐՈՐ հայրենակիցներուն 2019-2020 տարեշրջանի կրթնապատի դիմումները:

Կը խնդրուի հայրենակիցներէն անձամբ ներկայանալ վարչութեան գրասենեակը ամէն երկուշաբթի, չորեքշաբթի կամ ուրբաթ օրերը, կէսօրէ ետք ժամը 3:00-էն 7:00: Ընդունման վերջին պայմանաժամն է ուրբաթ, 29 նոյեմբեր 2019, որմէ ետք ներկայացած դիմումները պիտի մերժուին:

Բարի վերամուտ բոլորին:

ԼԻԲԱՆԱՆԻ ՄԱՐԱՇԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

www.afhil.com

ՎԱՐՉԱՊԵՏ ՓԱՇԻՆԵԱՆ...

Շարունակուած Ա. Էջէն



«Եթէ թալանող ըլլար, ընդունելութեան ընտրութիւններուն դրամ առնէր, ոչ մէկը դեմ պիտի ըլլար, չէ՛»: Արայիկ Յարութիւնեանը չէ, որ կ'իրականացնէ Հայաստանի կրթական քաղաքականութիւնը, այդ մէկը կ'իրականացնէ կառավարութիւնը, եւ ես երէկ կառավարութեան նիստին այդ նիւթին անդրադարձած եմ», ըսաւ Փաշինեան: Ցուցարարները դժգոհութիւն յայտնեցին նաեւ նախարարին՝ դաշնակցականներուն ուղղուած արտայայտութիւններէն, իսկ Փաշինեան ըսաւ, որ չի կարծեր, թէ նախարարը նման վիրաւորական արտայայտութիւններ ունեցած ըլլայ: Տոյցի մասնակիցները Փաշինեանին նաեւ հարց տուին ծանրամարտիկ Մելիսէ (Մել) Դաւուբեանի մասին պատմող ժապաւնի ֆինանսաւորման մասին: Վարչապետը ըսաւ. «Հիմա տարբեր երկիրներու ներկայացուցիչներ մեր ախոյեանին մասին ժապաւնէ կը նկարեն, իրենք 90 առ հարիւրով կը ֆինանսաւորեն, ու կ'ըսեն՝ քանի որ ձեր երկրի ախոյեանին մասին է, քիչ մըն ալ դուք ֆինանսաւորեցէ: Այն մարդը, որուն մասին կը խօսիք, եռակի ախոյեան է, մարդ է, որուն պատուին 3 անգամ Հայաստանի դրօշը բարձրացած է ու

Հայաստանի բայելոգը հնչած»:

Մասնակիցներէն մէկը դիտել տուաւ. «Այդ ժապաւնը տեսնելով ի՞նչ ուղերձ կը ստանայ ապագայի մեր սերունդը: Անոր զուգահեռ կը մերժուի ֆինանսաւորումները ուղղուած մեր թագաւորներու մասին ժապաւնէներուն եւ «Հայ ասպետ» հաղորդումին»:

«Ոչ մէկ արձագանք չէ եղած, ոչ ալ մեկուն հետ հանդիպած, գիշերը անցուցած ենք այդտեղ, նստացոյցը բնականոն իր ընթացքով կը շարունակուի: Նախարարին չենք տեսած, յետնամուտքով կու գայ», լրագրողներուն հետ ունեցած զրոյցին ընթացքին յայտնեց ՀՀՊՊ երիտասարդական թելի ներկայացուցիչ Արգիշտի Գերգեան: Ցուցարարներու պահանջին միացաւ նաեւ Շիրակի պետական համալսարանը, ուր ստորագրահաւք տեղի ունեցաւ՝ Արայիկ Յարութիւնեանի հրաժարականի պահանջով:

Նշենք, որ ՀՀՊՊ Հայաստանի երիտասարդական միութեան շարժման ու նախարարութեան դիմաց կատարուող նստացոյցին միացան նաեւ տարբեր համալսարաններու ուսանողներ, քաղաքացիներ եւ համալսարաններ, ինչպէս նաեւ՝ ՀՀՊՊ-ի սպիւռքի երիտասարդական միութիւններ:

ՊԱՐԱՍՅԻ ՄԵՋ ՇԱՐՔ ՄԸ...

Շարունակուած Ա. Էջէն

Մինչ այդ, իրաքեան իշխանութիւնները վերաբացած են երկրին հարաւը գտնուող Ում Զասր նաւահանգիստի հիւսիսային ու հարաւային դարպասները, ինչպէս նաեւ ցուցարարներու հեռացումէն ետք Նասիրիա քաղաքի գոման գործարանի աշխատանքին վերականգնումը յայտարարած են:	ցուցարարներու հեռացումէն ետք Նասիրիա քաղաքի գոման գործարանի աշխատանքին վերականգնումը յայտարարած են:
---	--

ԱՐԾՈՒԿ ՄԻՆԱՍԵԱՆ. «ՈՉ ՈՔ...»

Շարունակուած Ա. Էջէն

Անոնք անդրադարձան Հայաստանի ներքաղաքական վերջին զարգացումներուն ու կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմնակրթութեան նախարար Արայիկ Յարութիւնեանի վերջին յայտարարութիւններուն:

Արծուիկ Մինասեան յայտնեց, որ Արայիկ Յարութիւնեան փորձեց երիտասարդներուն ազնիւ ընդվզումին որակաւորումներ տալ այն պարագային, երբ ոլորտին մէջ իրականացուող քաղաքականութեան հիմնական շահառուն ինքնին երիտասարդութիւնն է՝ անդրադառնալով Արայիկ Յարութիւնեանի հրաժարականը պահանջող ՀՀՊՊ Հայաստանի երիտասարդական միութեան ներկայացուցիչներուն եւ անոնք միացած ուսանողներու ցոյցին:

«Պարզ եւ բնական է, որ երիտասարդութիւնը իր պոռթկումն ու ընդվզումը կ'արտայայտէ, եւ ասիկա կրթութեան պատասխանատուի կողմէ զանազան բնորոշումներով որակել, նաեւ կուսակցականացնել կը նշանակէ, թէ մարդը չի տիրապետեր իրավիճակին, մարդը չի հասկնար, թէ ո՛ր կը գտնուի, թէ ի՞նչ գործառնութիւններ ունի», նշեց ան:

Մինասեան կարողաց Արայիկ Յարութիւնեանի՝ օրէնքով սահմանուած գործառնութիւնը, ապա անցուց. «Ինչ որ ինք կ'ընէ, հակառակն է այդ գործառնութիւնը, այսինքն՝ ինք կը գործէ հակաօրինական ընթացքով»:

ՀՀՊՊ Հայաստանի Գերագոյն մարմինի անդամը վստահ է, որ երիտասարդներուն ընդվզումը փորձելով կուսակցականացնել Արայիկ Յարութիւնեան նպատակ ունի թուլցնել պայքարը, որ կը վերաբերի ո՛չ թէ կուսակցականութեան, այլ ազգային գիտակցութեան, ինքնութեան: «Պատահական չէ, որ այս ոլորտի կարեւոր դերակատարները՝ մտաւորականները, դասախօսները նոյնպէս իրենց բողոքի ձայնը կը բարձրացնեն այն քաղաքականութեան առընդէմ, որ այս ոլորտի կարեւոր շրջանառութեան մէջ: Ան կանխամտածուած օտարածին օրակարգի սպասարկում կ'իրականացնէ: Խելացի իշխանութիւնը այսպիսի ընդվզում կ'ընդունի իբրեւ կարեւոր ազդակ, ուստի կրնանք արձանագրել, որ այս իշխանութիւնը խելացի ալ չէ»:

Անդրադառնալով կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմնակրթութեան նախարար Արայիկ Յարութիւնեանի յայտարարութեան՝ քրեական գործերուն վերաբերող, Մինասեան դիտել տուաւ. «Հրապարակային յայտարարութիւն է, որ Արայիկ Յարութիւնեանը քրեական օրէնսգիրքով ենթակայ է պատասխանատուութեան, թող յօդուածը ինք որոշէ: Երկու յօդուածի այլընտրանք ունի՝ կամ սուտ մատնութեան յօդուածը, երբ յանցագործութեան մասին սուտ մատնութիւն կը կատարէ, գիտակցելով, որ իր տրամադրած տեղեկութիւնը կեղծ է կամ յանցագործութիւն կը քողարկէ, ծանր կամ առանձնապէս ծանր յանցագործութեան գործիքը, առիթը, թեման կանխամտածած կը քողարկուի: Հակառակ պարագային Արայիկ Յարութիւնեանի արտայայտած սպառնալիքները ունին մէկ նպատակ՝ քաղաքական **շաւթածի** միջոցով փորձել իրական մեղադրանքներու տարաւի տեղալ: Այս ամէնը ցոյց կու տայ, որ մենք գործ ունինք անպատասխանատու անձնաւորութեան հետ, որ, ցուօք, Հայաստանի իշխանութեան վարկաբեկման, հեղինակազրկման գործընթացի սկսած է: Ի վերջոյ, փոփոխութիւնները, որոնք դրուած են շրջանառութեան մէջ, ունին բովանդակային հակասութիւններ իրենց իսկ յայտարարած նպատակներուն հետ»:

Ան վստահ է՝ երիտասարդներուն ընդվզումը, բողոքն ու ցասումը աջակցութիւն կը տանայ Հայաստանի բոլոր բնականվայրերուն մէջ եւ հասարակութեան բոլոր շերտերուն կողմէ: «Մեր ազգային ինքնագիտակցութիւնը, ազգային նկարագիրը երբեք ու ռեւէ Արայիկ Յարութիւնեաններ եւ օտարածին օրակարգեր սպասարկելու պատրաստ անձեր չեն կրնար կտրել»:

ՄԱՀԱՁԴ

ԼՕԽ-ի «Աղւանի Փափագեան» մասնաճիւղի (Չալքա) վարչութիւնը կը գուժէ իր շրջանի նախկին վարչական անդամին՝

ՄԻՐՎԱՐԴ ՊԱՅՐԱՄԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ չորեքշաբթի, 6 նոյեմբեր 2019-ին:

ՄԱՀԱՁԴ

Տէր եւ տիկին ՕՆՆԻկ Պայրամեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Վրգէն Պայրամեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Սարգիս Գրիգորեան Տիկին Վարդուհի Գրիգորեան Տէր եւ տիկին Աւետիս Գրիգորեան եւ զաւակունք Տիար Պետրոս Տառտեան Տէր եւ տիկին Ռազմիկ Տառտեան Տէր եւ տիկին Գրիգոր Գրիգորեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Սերժ Չուխատարեան եւ զաւակը Տիկին Մարի Պայրամեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Գրիգոր Վահրատեան եւ զաւակունք Պայրամեան եւ Գրիգորեան ընտանիքներ Դարիպեան եւ Սերայտարեան ընտանիքներ Զիւրքեան եւ Եսայեան ընտանիքներ Ատրա եւ Սերքեան ընտանիքներ եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, մեծ մօր, քրոջ, հորաքրոջ, մօրաքրոջ եւ հարազատին՝

ՄԻՐՎԱՐԴ ՊԱՅՐԱՄԵԱՆԻ (ՃՆՃԱՎ ԳԻՐԳՈՐԵԱՆ)

անակնկալ մահը, որ պատահեցաւ չորեքշաբթի, 6 նոյեմբեր 2019-ին, իր բնակարանին մէջ:

Յուրաքանչեւ արարողութիւնը կատարուեցաւ ուրբաթ, 8 նոյեմբերին, կէսօրէ ետք ժամը 3:00-ին, Ասթիլիայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Փղոն Շղապեի Ազգային գերեզմանատունը:

●*Ներկայս ընդունիլ իբրեւ մահադգ:*
●*Ցաւակցութիւնները կ'ընդունուին Չալքայի Ս. Կաշ Եկեղեցւոյ տրախին մէջ, շաբաթ, 9 եւ կիրակի, 10 նոյեմբեր 2019-ին, կէսօրէ առաջ ժամը 11:00-էն մինչեւ երեկոյեան ժամը 6:00:*
●*ՏԱՆՕԹ:- Ըստ հանգուցեալին փափաքին, փոխան ծաղկեպսակի՝ Նուիրատուութիւնները կատարել ԼՕԽ-ի «Աղւանի Փափագեան» մասնաճիւղին:*

ԱԿՆԱՐԿ

ԷՐՏՈՂԱՆԻ ՈՒԱՇԻՆԿԹԸՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ՄԻԱԿԱՄ ՉՕՐԱՇԱՐԺԻ ԴՐԱԷՐ

Միացեալ Նահանգներու Նախագահ Տոնքլտ Թրամփ կը պատրաստուի չորեքշաբթի, 13 Նոյեմբերին հիւրընկալելու Թուրքիոյ Նախագահ Ռեժեփ Թայյիփ Էրտողանը։ Սա անսուղղակի հրաւեր մըն է հայութեան՝ յաւելեալ գորաշարժի ենթարկելու իր քաղաքական-քարոզչական կարողութիւնները, միացնելու Յայաստանի ու սփիւռքի ձեռքերը, Միացեալ Նահանգներու եւ աշխարհի աչքերուն դիմաց պարզելու համար Թուրքիոյ պետութեան անցեալի ու ներկայի ոճրային արարքները՝ Ցեղասպանութենէ մինչեւ ճակատագրակից ժողովուրդներու սպանողը, Կիպրոսն ու Սուրիա-Իրաքը, քիւրտերն ու եգիպտիները։ Աւելին. պէտք է ահագանգ հնչեցնել կայսերական ու փանթուրանական անթելած ծրագիրները վերականգնելու թրքական յաւակնութեանց դէմ. Նախաճաշակին ականատես ենք Սուրիա թափանցումով։

Լուրին հրապարակման պահուն որոշ Նախաճաշակ տրուեցաւ, թէ Սպիտակ տան պետը ինչպիսի՝ «բարեհառն» տրամադրութիւններ ունի Էրտողանի նկատմամբ (օրինակ՝ խանդավառ չէ Ցեղասպանութեան հարցը արժարելու Ներկայացուցչական տան բանաձեւին հետեւողութեամբ), մինչդեռ վերջերս անոր հետ կը խօսէր սպառնալիքներու եւ պատժամիջոցներու լեզուով։

Կ'արժէ արագ ակնարկ մը նետել այն մթնոլորտին վրայ, որ մեր՝ հայութեան դիտանկիւնէն տեսե՞ծուած է վերջին շաբաթներուն, մէկ կողմէ՝ Թուրքիոյ, ու միւս կողմէ անոր «եղբայր» հոչակուած Ազրպէյճանի հետ յարաբերութեանց ճակատներուն վրայ, զարգացումներ, որոնք զուգահիւյսեացն մասնաւորաբար Սուրիոյ բեմին վրայ զինուորական ծանօթ շարժումներուն։

Ա.. Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու տունը՝ ծայկերու ջախջախիչ առաւելութեամբ որդեգրեց Ցեղասպանութիւնը ճանչցող եւ համապատասխան տեսորիւմներուն առջեւ ճամբայ բացող թիւ 296 բանաձեւը։ Այս քայլը հազուադէպ միաձայնութեամբ մը ընկալուեցաւ հայութեան հայրենի ու արտերկրի «կէսերուն» կողմէ, դրական արձագանգ գտաւ Նաեւ մեզ շահագրգռող միջազգային շրջանակներու մէջ։ Մասնաւորաբար Յայաստանի մէջ քաղաքական սուր հակաճառութիւններով բեմը ծանրացնող բոլոր կողմերն ու մեկնաբանները այս կէտին շուրջ ըստ էութեան համակարծիք գտնուեցան։ Տարբեր ալ չէր կրնար ըլլալ։ Նոյն տրամադրուիքն էր կը տիրէ Թրքականոյին կողմէ Նոյնիմաստ՝ թիւ 150 բանաձեւի որդեգրման սպասումով, որ սակայն կը թուի սառնարան դուռած ըլլալ՝ սպասելով Թրամփ-Էրտողան տեսակցութեան արդիւնքին...

Բ.. Յայաստանի արտաքին գործոց Նախարար Չոհրապ Մնացականեան 25 հոկտեմբերին հարցազրոյց մը ունեցաւ Պի.Պի.Սի-ի մէկ լրագրողին հետ՝ հիմնականին մէջ խօսելով Յայաստան-Ազրպէյճան հակադդրութեան մասին. հարցազրոյցը հակադրի մեկնաբանութիւններու առիթ եղաւ հայրենի քաղաքական ու մամուլոյ դաշտերուն մէջ. իշխանութեան մօտիկ շրջանակներ դրական տրամադրութեամբ ներկայացուցին հարցազրոյցը, իսկ հակադիր ճակատը նշեց, որ Մնացականեան «տկար ինկած» Է լրագրողին դիմաց, ըստ արժանւոյն չէ կրցած պատասխանել անոր հարցումներուն, որոնք բացայայտօրէն պատրաստուած էին զինք նեղ կացութեան մատնելու Նպատակով։ Նշուեցաւ Նաեւ, որ մեր դիւանագիտական մեքենան «ամէկ-կոտ» Է ու «քաղաքավարութեան» զոհ կ'երթայ երբեմն, միջազգային բեմերու վրայ անհրաժեշտ բարձութեամբ չի ծածաւներ մեր արդար իրաւունքներուն դրօշը։ Այս տեսակէտը տարածողներ քայլ մըն ալ անդին զացին՝ նկատել տալով, որ վարչապետ Փաշինեանի ու այլ բարձրաստիճան պատասխանատուներու հրապարակային յայտարարութիւնները (մերթ՝ «Արցախը Յայաստան Է ու վերջ», այլ առիթով՝ «Արցախի հարցը պէտք է լուծել բանակցութեանց ճամբով», «լուծման տարագիւն պէտք է համաձայն ըլլան Յայաստանի, Ազրախի ու Ազրպէյճանի ժողովուրդները» եւ այլն) անբաղձալի հակազդեցութիւններ կը ստեղծեն միջազգային առնչակից շրջանակներու ու կը տկարացնեն հայկական կողմին դիրքերը։ Բանավէճն ու տարբեր մեկնաբանութիւնները ցոլացուցին այն իրականութիւնը, որ հայկական կողմին դրական ու հաւասարակշռութիւն-հաւասարութիւն փնտռող մօտեցումը համապատասխան ընկալում չէ գտած ո'չ միայն Ազրպէյճանի (չկրկնեց) Ալիեւի ծանօթ խօսքերը), այլ Նաեւ կարգ մը միջնորդ կողմերու եւ հայկական դաշտին մէջ։ Սա Նաեւ յուշարար Է, որ երբ ի սկզբանէ ծանօթ եւ հակառակորդիդ տեսակէտին, բազմահանգրուան դառն փորձառութիւններ ունեցած եւ, քու ամէնէն բարի տրամադրութիւնդ անգամ կը մնայ անարձագանգ, առիթ կու տայ նենգամիտ հակադարձութեան։ Փորձագուկներն ալ ճիշդ 10 տարի առաջ ճամբայ ելած էին նման բարի տրա-

մադրութիւններով...

Գ.- Նոյն Նախարարը՝ Մնացականեան, յիշեալ հարցազրոյցէն աւելի քան շաբաթ մը ետք, Յայաստան-Ուքրանիա յարաբերութեանց նուիրուած հանդիպումի մը՝ Շուէտի մէջ, շատ աւելի ուժեղ պաշտպանողականով մը հանդէս եկաւ Արցախի իրականութիւնները ներկայացնելու իմաստով. այս անգամ զինք նեղ կացութեան մատնել փորձող ազերի պատգամաւոր մըն էր, որ կ'աշխատէր հայկական կողմը յաջ ներկաներուն՝ ներկայացնել իբրեւ ոճրային արարքներ կատարող։ Մնացականեան ողջունելի հակայարձակում մը կատարեց՝ յիշեցնելով Պաքուի, Սումկայիթի, Մարաղայի, Շահումեանի, Մարտակերտի, Մարտունիի եւ նման «դէպքեր», ուր ազերիական կողմին ոճիրներն ու Նախայարձակումները, ցարդ գրաւեալ մնացող հայկական հողամասեր կերտած են ազերիական ոճիրներուն «պատմագիրքը»։ Այդ հարցազրոյցը միայն մեղմ արձագանգ գտաւ հայկական բեմին վրայ (մինչդեռ կ'արժէր անելին ու արդար գնահատում), թէեւ հոն ալ կարելի Է ըսել, որ Նախարարը պէտք չէր բաւականանար միայն «հեռաւոր անցեալ»-ի դէպքերով, այլ խարաներ ազերիական ճակատը՝ յիշեցնելով 2019-ի ապրիլ՝ Եալիշն ու այլ սահմանային շէներ, Նաեւ այն, որ մինչեւ այսօր ալ հայ զինւորներ զոհ կ'երթան, կը վիրաւորուին սահմանին վրայ, հայկական աւաններ կը ռմբակոծուին, արձակագէներու թիրախ կը մնան։ (Հաւանաբար դիւանագիտական տրամաբանութիւնը թոյլ պիտի չտար, որ ան «սահմանը անցնէր» եւ յայտարարէր, որ Ազրպէյճանի վերջին 30 տարիներու, անկէ առաջ ալ՝ խորհրդային տարիներու վարքագիծը յար եւ նման Է ցեղապան Թուրքիոյ վարմունքին...)։ Աւելին. սպասելի էր, որ ներկաներուն ուշադրութեան յանձնէր, որ հայկական կողմը ըստ ամենայնի կ'աշխատի խաղաղութեան մթնոլորտ ստեղծել, սակայն նման տրամադրութիւն չի տեսներ Պաքուի մէջ, այլ խօսքով, առիթը պէտք էր օգտագործուէր անգամ մը եւս պատռելու ազերիական կողմին դիմա-

Ինչո՞ւ կատարեցինք վերի «յուշապատում»-ն ու որոշ նշումներ։

Ըսելու համար, որ երբ գործ ունինք մեր եական հարցերուն հետ՝ Արցախի ապահովութեան, բանակցային գործընթացին եւ ընդհանրապէս հայ-թրքական թղթածրարին հետ, սպասելի է, որ հայութիւնը ներկայանայ մէկ ու միացեալ դիրքորոշումով, այնպէս՝ ինչպէս կը պահանջէ մեր արդար իրաւունքներուն հետապնդումը։

Արտաքին քաղաքականութեան, Արցախի ու Ցեղասպանութեան ճանաչման, անկէ բխող մեր իրաւունքներուն հետապնդումը պէտք է զերծ պահել ներքին-քաղաքական «սակարան»-էն, որ արդէն ըստ բաւականին բաւարար վառելանիւթ ունի «տեղական» տազակալներու պատճառով, ա'յնքան վառելանիւթ, որ երբեմն մարդս կ'ունենայ այն մտավախութիւնը, թէ ան-նիւթական բոցերը կրնան յումպէտս վառնել դրական ճիգերն ու բարի տրամադրութիւնները։ Միջազգային «սակարաններ»-ն ալ, գիտենք, յաճախ տրամադիր չեն ի նպաստ մեր իրաւունքներուն շարժելու, կրնան մանր հպումներով կամ մեկ արտա-յայտութեամբ (ինչո՞ր չէ՝ Նաեւ կարող խօսքէ ետ կանգնելով), բազում տարիներու ճիգ ու քաղաքական աշխատանք յումպէտս վառելու։ Իսկ մենք տակաւին Նոր ականատես եղանք, որ պատմական պահերու Նպաստաւոր հովերը կարելի է օգտագործել ի Նպաստ մեր իրաւունքներուն ճանաչման։

Պէտք չէ մտահան ընել, որ արտաքին կողմերու, մասնաւորաբար մեր թշնամիներուն դէմ կանգնող պաշտօնական ներկայացուցիչները՝ վարչապետ, Նախագահ, Նախարար թէ այլ, ՄԵՐ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ կը ներկայացնեն, եւ ո'չ թէ այս կամ այն քաղաքական խմբաւորումը, կուսակցութիւնը։ Ի՛նչ որ ալ ըլլան ներքին «սակարանները» վերիվարումի ենթարկող բանավէճերն ու հաշիւները, հայութիւնը իրաւունք չունի իր պետական ներկայացուցիչներուն միակամ զօրակցութիւն չորամարդելու, անկախ անկէ, որ անոնցմէ կը սպասէ իր միակամ զօրակցութիւնը արդարաց-նող անշեղ կեցուածք։ «Դրսեցինք» մեր ներքին «սակարանով» կը շահագրգռուի միայն այնքան, որքան անոր ելեւէջները Նպաստ խոստանան իր հաշիւներուն, մինչդեռ մենք վարկեան չենք վատնել՝ յայտարարելու եւ արդարօրէն հպարտանալու, որ ինքնինչեան-գերիշխան երկիր ունինք։

Այս տրամաբանութեամբ Է, որ, շեշտենք, Էրտողանի Ուաշինկթըն այցելութիւնը միասնական աշխատանքի, Նաեւ ներկայի ծանօթ Նպաստաւոր հովերու օգտագործման առիթ մը կը բերէ մեզի՝ հայրենի պետութեան, Հայ դուտի սպասարկուներուն եւ անոնց զօրակցող մեր ժողովուրդին։

Ս. ՄԱՅՏԵՐԵՃԵԱՆ

7 Նոյեմբեր 2019

Կան մարդիկ, որոնք աշխարհ կու գան, լուռ կը գործեն ու կ'անցնին։

Անոնցմէ կարելի է նկատել Անդրա-նիկ Սիմոնեանը, որ պատանեկան տա-րիքէն անդամակցած է ՀՀԴ պատանե-կան միութեան շարքերուն։ Հոն թրծուած է հին ընկերներու շունչին տակ եւ գործած՝ պարկէշտութեամբ ու հա-մեստութեամբ, մինչեւ երիտասարդու-թեան տարիքը, երբ բռնկեցաւ Լիբանա-նի քաղաքացիական պատերազմը։ Ար-դէն պատրաստ զինուոր էր ան եւ կ'անցնի շրջանի հայապահպանման գործին։ 1977-ին կ'ընտրուի ՀՀԴ «Սար-դարապատ» կոմիտէի անդամ։ Կը գոր-ծէ ամենայն բժախնդրութեամբ։ Անկէ ետք կը ստանձնէ Մարաշ թաղի պահա-կութեան պատասխանատուութիւնը։

Իր բժախնդրութեամբ եւ համեստու-թեամբ Անդրանիկ Սիմոնեան կրցաւ իր շուրջ հաւաքել շրջանի համակիր եւ կուսակցական երի-տասարդները եւ գործի լծեց զանոնք՝ հասնելով բոլոր թա-



դեցիներու կարիքներուն։

Ընկեր Անդրանիկ համեստ էր, սիր-ւեցաւ ժողովուրդին կողմէ, շրջանը, զոր ստանձնած էր, ժողովուրդը՝ կոմիտէին հետ, կոչեց ՍԻՄՈՆԵԱՆ շրջան, եւ այդ-պէս մնաց մինչ օրս։

Անդրանիկ Սիմոնեանի նման օրինա-կելի ընկերներ չեն մոռցուիր, անոնց ազ-նիւ, բայց քաջ կեցուածքը, Նաեւ երբեմ-նի ժպիտը, որ դժուար էր տեսնել, միշտ պիտի ընկերակցին մեզի։ Յիշատակնե-րը շատ են եւ երկար պիտի յիշուին։

Մեզի կը մնայ քսել՝ վարձքդ կատա'ր, Անդրանիկ Սիմոնեան, գործեցիր ժողո-վուրդին եւ կուսակցութեան համար, եղար ազնիւ եւ քաջ զինուոր։

Գործդ պիտի շարունակուի։ Նոր անդրանիկներ պիտի գան։

Հոլով թեթեւ գայ վրադ, ընկե'ր։

ՀՀԴ «ՄԱՐԴԱՐԱՊԱՏ» ԿՈՄԻՏԵ

ԳՕԳՕ ՏԵՄԻՐՃԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՐ ՔԱՌԱՍՈՒՆՔԻՆ ԱՌԻԹՈՎ

Քառասուն օրեր անցան այն օրէն, երբ հողին յանձնեցինք մեր սիրելի եւ յարգելի ընկեր Գօգօ Տեմիրճեանը։ Դա-ժան մահը գայն խեղ իր ընտանիքէն եւ ընկերներէն։

Գօգօ Տեմիրճեան ծնած է Հայաշէն, 1961-ին։ Հայ Նահապետական ընտանի-քի մը շուքին տակ փոքր տարիքէն յա-ճախած է Հայաշէնի Ազգային Թորգոմ-եան վարժարանը՝ ստանալու համար իր Նախնական ուսումը։

Սակայն իր պատանի տարիքին ան կորսնցուցած է հայրը՝ ծանր արկածի մը պատճառով եւ ընտանիքին ամբողջ պատասխանատուութիւնը ինկած է իր ուսերուն։ Ուստի, հազիւ 14 տարիքը ամբողջացուցած, ան նետուած է կեան-քի պայքարին մէջ՝ բարուք կեանք մը ապահովելու համար իր ընտանիքին անդամներուն։

Փոքր տարիքէն ան Հայաշէնի «Ռոստոմ» ակումբ յաճա-ելով՝ անդամակցած է ՀՄԸՄ-ի սկաւտական կազմին, եղած է զայլիկ,սկաւտ, Նաեւ մաս կազմած է «Ռոստոմ» ակումբի պատանեկան միութեան,որուն ընդմէջէն ստա-ցած է դաշնակցական բիւրեղ դասախարակութիւն՝ ըլլա-լով ուշիմ եւ հնազանդ պատանի մը։

Ապա ան անցած է ՀՀԴ շարքերը եւ ծառայած՝ կուսակ-ցութեան, ժողովուրդին եւ հայրենիքին՝ իր բոլոր ուժերով։ Ան եղած է տիպար եւ օրինակելի ընկեր մը. ստանձնած է բազմաթիւ պարտականութիւններ եւ կատարած է զա-նոնք առանց ընդվզումի։

ԶԻՒՆ ԱԻԵՏԻՍԵԱՆԻ «ԴՐԱՆՏԻ ԴԱՐՊԱՍԸ» ԺԱՊԱԻԷՆԸ ՄԵՃ ՊԱՍՏԱՌՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ Է ԱՐԳԷՆ

Բեմադրիչ Զիւան Աւետիս-

եանի «Դրախտի դարպասը» ժապաւէնը, որ կ'անդարառա-նայ արցախեան թեմային, հոկտեմբեր 17-ին բարձրա-ցած մեծ պատահէ։

«Արմէնփրես»-ի հաղոր-դումով, ժապաւէնին անդրա-նիկ ցուցարդութիւնը կայա-ցաւ «Կինուպարկ»-ի մէջ, ուր հոկտեմբեր 17-էն սկսած՝ մէկշաբաթեայ բացառիկ ցու-ցարդութիւններ տեղի կ'ունե-նան, իսկ հոկտեմբեր 25-էն սկսած՝ ցուցարդութիւնները կը շարունակուին թէ՛ «Կինու-պարկ»-ի, թէ՛ Երեւանի շար-ժապատկերի բոլոր սրահնե-րուն մէջ։ Անդրանիկ ցուցադ-րութեան ներկայ եղած է Նա-եւ Հայաստանի Հանրապե-տութեան վարչապետ Նիկոլ Փաշինեանը։

Զիւան Աւետիսեանը գրոյ-ցի ընթացքին Նշած է, որ ժա-պաւէնը կեանքի կոչելու ըն-թացքին անցած են բազում դժուարութիւններու մէջէն։ «Հայաստանի մէջ ժապաւէն նկարահանելը, այն ալ՝ ար-ցախեան թեմայով, բաւակա-նին բարդ է թէ՛ ֆինանսա-կան, թէ՛ քաղաքական առու-մով։ Այս անգամ եւս հարեան պետութիւնը փորձեց խո-չընդոտել արտասահմանեան դերասանական եւ ստեղծա-գործական կազմի ներգաւաւուածութեան՝ ժապաւէնի եւ արտասահմանեան նկարահանումներուն, յարձակողա-կան ալիք բարձրացուց, ինչը դժուարացուց երրորդական կողմէ ֆինանսական աջակցութեան հարցը։ Այո՛, մեր հա-րեւանները մեզ փորձած են խոչընդոտել, բայց մենք առաջ ընթացած ենք հոսանքին հակառակ եւ այսօր արդէն ու-նինք մեծ արդիւնք։ Ժապաւէնի թիրախային հանդիսատե-սը ամբողջ աշխարհն է, ուստի մենք ժապաւէն կը ստեղ-ծենք միլիոնաւոր մարդոց համար», ընդգծած էր Աւետիս-եանը։

«Դրախտի դարպասը» ժապաւէնի գլխաւոր հերոսը եւ-րոպացի լուսանկարիչ-լրագրող Է, որ կը փորձէ սահուն գործունեութիւն ծաւալել, բայց «կը սայթաքի», ինչը կը վե-րածուի տրամայի։ 2016 թուականին ան կը վերադառնայ Արցախ՝ լուսաբանելու քանսերկու տարուան ընդմիջումէն ետք վերսկսած պատերազմը։ Լրագրողական հետաքըն-նութեան որպէս արդիւնք՝ կը ծանօթանայ երիտասարդ օսիերային երգչուհի Սոֆիա Մարտիրոսեանին հետ։ Ռո-պերթի եւ Սոֆիայի յաճախակի հանդիպումները




Իր մահով Հայաշէնը կորսնցուց իր սինդերէ մէկը,

կորսնցուց ընկեր Գօգոյին բարի սիրտը եւ ժպիտը. ան իր հիւանդութեան բոլոր դժուար օրերուն մնացած է ժպտուն, խաղաղութիւնը տիրած է իր հոգւոյն ։

ՀՀԴ «Ռոստոմ» կոմիտեութեան անունով կը խոստա-նանք իր ճանապարհը շարունակել եւ իր յիշատակը պա-հել անթառամ մեր սրտերուն մէջ։Իբրեւ իր հաւատարիմ ընկերները՝ մենք պիտի շարունակենք ամուր պահել մեր հաւատքը եւ նուիրումը մեր ժողովուրդին ու հայրենիքին նկատմամբ։

ՀՀԴ «ՌՈՍՏՈՄ» ԿՈՄԻՏԵ



Կ'արթնցնեն փոխադրած սիրոյ զգացմունքը, սակայն կը պարզուի, որ Սոֆիան անյայտ կորած լուսանկարիչ-լրագ-րող Էդգար Մարտիրոսեանին աղջիկն է, որուն 1992 թուա-

Շաբ.ը՝ էջ 8

ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ ՈՐ ՓԱՌԱԽՈՐԵՑ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՍՏՈՒԱԾ ՓԱՌԱԽՈՐՈՒԵՅԱԻ ԻՐՄՈՎ

Դժուար է ընդունիլ, նոյնիսկ՝ հարկիր տարւան հազուադէպ սահմանը անցնելէ ետք, թէ ժազ Յակոբեան պիտի հեռանար Երկիր մոլորակէն: Պնաց՝ ամէն օր Աստուծոյ փառք տալով առաւօտեան գարթնումին համար: Խաչեալ Զրիստոս չհեռացաւ սրտէն, ոչ ալ աստուածատուր ոսկէ գրիչը՝ ձեռքէն:

Պնաց քերթողը, մնաց իր հոգիին գիրն ու աւիշը, որ ողորձած էր սփիւռքը ծայրէ ի ծայր: Ինչպէս Յակոբեան սնունդ սերունդներու համար եւ հայաշաղխի հաց հայոց տուններու է վարժարաններու մէջ:

Եւ հիմա ի՞նչ մնաց, ինչ որ տուաւ ուրիշին, մնաց: Ինչ որ ուրիշը տուաւ իրեն ա՛ն ալ մնաց: Իր աշակերտներուն համար անմոռանալի էր իբրեւ հայերէնի դասատու: Բժիշկ մը տարիներ առաջ ըսաւ. «Ո՛չ հայր, ո՛չ մայր. աշխարհի մէջ մէ՛կ հոգի կը յարգեմ միայն, ուսուցիչս՝ ժազ Յակոբեանը»: Բայց Յակոբեան կը խուսափէր փառք ու փառաբանւթք. «Փառքը միայն Աստուծոյ պէտք է մատուցուի», կ'ըսէր: Իբրեւ նկարագիր՝ հսկայ մըն էր իր մարդասիրութեամբ, ազնուութեամբ, համեստութեամբ, Աստուածաշունչի եւ մեր գիրի ու պատմութեան հմտութեամբ: Օ՛ր, մանաւանդ՝ մետրոպաշունչ ներշնչումով: Ամէն տող հայ մարդու իր մտղէն կ'անցներ: Դարերէ՛ն կու գար եւ կ'առաջնորդէր դէպի հաւատք ու պայքար:

Եւ հիմա հանգչած է ալեւոր քերթողը, որ գործավարն էր իր ժողովուրդին եւ զինուորը Աստուծոյ: Խաղաղած է խռովայոյզ հոգին, որ գուրգուրաց Յայաստանի՝ սփիւռքի մէջ, բայց երբեք չտեսաւ Յայաստանը այնպէս ինչպէս, բազում արժանի ու անարժան գրողներ տեսան: Պառկած է՝ խաչը կտրծքին, ժպիտն ու խաղաղութիւնը՝ դէմքին: Զամբուրեք այդ խաչը եւ իր արեամբ գրած բանաստեղծութիւնները բերեց տուն, որ լուսեղնէ մնայ Տունը, եւ կանգուն՝ քերթութեան Տաճարը:

Ուղերձը, գոր գրած էի իր հարիւրամեակին առիթով, լաւագոյնս կը յայտնէ ինչ որ ըսել կ'ուզէի ժազ Յակոբեանին:

Սիրելի՛, շա՛տ սիրելի ժազ Յակոբեան,

Ձեր անցած գրեթէ հարիւր տարիներու ընթացքին դուք հարիւր անգամ ապրեցաք տարուան չորս եղանակները. հետեւաբար կը հաւատասք, եթէ ըսեք մեզի, տարին միայն չորս եղանակ չունի, այլ՝ քառասուն, եւ այդ քառասունին երեսունինն հայո՛ւն համար կը ստեղծուի:

«Յայ» բառին երեք տառերը Սուրբ Երրորդութեան նման փոխանցեցիք մեր ազգին, եւ ձեր 36.200 օրերուն իւրաքանչիւրը ապրեցաք իբրեւ հայ ուխտաւոր եւ աստուածատուր առաքեալ:


Չեմ կրնար չմտածել, թէ Դանիէլ Վարուժան Նահապետկունցաւ 1915-ի օգոստոսին, եւ դուք ծնաք ճիշդ երկու տարի ետք՝ 1917-ի օգոստոսին: Այն օրէն, որ Նիկոյ Աղբալեան լուսագօծեց ձեր տաղանդը, դուք ութսուն տարի առանց դադար՝ Աստուծոյ ձեզի շնորհած մէկ տաղանդը վերածեցիք հարի՛րի:

Ձեր նորահարսին ետրգեցիք մեղրալուսիկը: Զերթողութեան գաղտնի ճամբայէն անցնելով՝ վառեցիք ճրագները մեր Նախնիներուն, Նահատակներուն, տներուն եւ աւանդութիւններուն, ձեր սերունդին եւ յաջորդող սերունդներուն համար: Մեր տուններուն հարազատ ըլլող եղան ձեր ժազափունջերը: Յայաբոյր մարգարտաշարներ են, ինչ որ քերթողած էք ձեր մօր ու հօր եւ ձեր ինկզ գաւակներուն մասին:

Իբրեւ սփիւռքի բանաստեղծ՝ ներքոնցեցի հայկական կազմակերպութիւնները եւ մանաւանդ՝ հայ վարժարանը: Ու հակառակ ձեր ղեղազործի վկայականին, երբ որ հարկ էր, մտաք հայկուկներու դասարաններէն ներս եւ անոնց հոգիին հաւատք ու մտքին լոյս ջամբեցիք ինչպիսի՞ գուրգուրանքով ու հմտութեամբ: Ձեր հազարաւոր աշակերտներն ոմանք կը վկայեն, թէ ինչպէ՛ս սիրցուցիք հայոց լեզուն, հայութեան հայրենիքը, հայկականութեան գիտակցութիւնը:

Իբրեւ բանաստեղծ՝ առաջին օրէն

ԿԵՅՆԱՆՈՒՇ ԹԵՔԵԱՆ



ունեցաք ինքնուրոյն ոճ մը՝ կուռ եւ առոյգ, պատկերներու խտութեամբ ու յուզականութեամբ, բառերու շքերթով, որ յաղթանակող բանակի մը քալուածքին կշռոյթը կը յուշէ: Երբեմն շեփորահար, երբեմն սրնգահար, սպարապետ ու քուրմ, արդարադատ ու սրտազեղ, միշտ հայոց հին ու նոր պատմութեամբ թաթաւում:

Ինչ որ կատարեցիք, լաւագո՛յնը ըրիք: Լաւագոյն կողակից ու հայր, որդի եւ բարեկամ, քարոզիչ ու դաստիարակ, աստուածապաշտ ու մարդկայնասէր, բանաստեղծ եւ տեսլիքի ռահփրայ:

Աւա՛ր, դուք, որ երկնեցիք Մասիսածինը, դուք, որ Արարատը բարձրացուցիք սփիւռքի բոլոր անկիւններուն, ուր հազարաւոր ընթերցողներ ունէիք, դուք որ սփիւռքի եւ Յայաստանի հաւատքի երգիչն էք, երբեք չիրաւիրուեցաք հայրենի հողին վրայ ոռոջ դնելու, ֆիզիքապէ՛ս հաղորդուելու: «Դիմա արդէն ուշ է», ըսիք քանի մը տարի առաջ անհուն բարութեամբ ու մղկացողք սիրտով, «Ես հոգեկան աչքերով ամէ՛ն օր կը տեսնեմ զայն»: Ափսո՛ս, հազա՛ր ափսոս:

Սակայն դուք միշտ երիտասարդ մնացիք: Ո՞ր ութսունիկը տարեկան ալեւորը կը հրատարակէ իրեն վաթսունիկը տարուան կողակից Լիւուշին ձօնուած հատոր մը. կը իշխէ՛ր ի՞նչ խանդաղատանքով կարդացիք գանձնը Նիւ Ճըրզիի սրահի մը մէջ՝ զարմացնելով սերը տարիքի հետ շփոթող ունկնդիրները: Շատեր չեն գիտեր, որ զուարթ էք բնաւորութեամբ եւ բացառիկ **հիմնքի** տեր: Ամէն հեռաձայնեւուն նոր հատոր մը կա՛մ հրատարակուած է, կա՛մ մամուլի տակ է: «Այլեւ ո՛վ պիտի կարդայ» կ'ըսէք եւ... անդադրում կը գրէք: Նման չէք այլ գրողներու, դուք ունիք ո՛չ թէ հարց ու հարցումներ, այլ՝ պատասխաններ:

Զարիւր տարին անբաւարար է այսքան Նուաճում կատարելու, բայց Աստուծոյ օրհնութիւնը ձեր մտքին իմաստութիւն եւ գրիչին քաջութիւն տուաւ: Ձեր մեծագոյն սերը մնաց Յիսուս Զրիստոս: Սուրբգրային վերլուծումներու եւ բանաստեղծութեան քանակիրն էք հոգեւոր թերթերու մէջ: Իրրուած քերթող՝ մեր բեմերուն ու մամուլին:

Աստուածաշունչով արքշիռ՝ ստեղծեցիք բազմաթիւ կարկաչուն վտակներ ու գեղահունչ յափտեակնաւորութիւն: Զարոգեցիք, միսթարեցիք անմխիթարները, անկարները, անտեսուածները, յուսահատները, միայնակները, կարեկից եղաք ու շալկեցիք անոնց վիշտը: Խաղաղ կեանքէ զրկուած մարդոց Աստուծոյ ղեկազորը ստիպ: Գառնուկի նման՝ քալեցիք Յիսուսի հետ, բայց առիծի՞ պէս պաշտպանեցիք Զրիստոսը մամուլով, բեմերէն, բանիւ եւ գործով, անոնց դէմ, որոնք կը թերազնաւորեին կամ կ'արհամարհեին խաչակի Փրկիչը: Ձեր փորթը իսկ չէ, թէ ձեզ «Ռուճի» կ'անուանեն. ընդհակառակը, կ'ուրախանաք, որ հոգեւոր կը նկատուիք: Մինչեւ հիմա կը զարմանամ, թէ ինչո՛ւ Գրիգոր Նալեկացի «ռուճի» չի կոչուիր:

Դուք, որ մի՛շտ խուսափեցաք փառք ու պատիւէ՛ պնդելով, որ միայն Աստուա՛ծ արժանի է անոր, այս երեկոյ ընդունեցէ՛ք այս սկիիք՝ սիրոյ ու յարգանքի, որովհետեւ դուք հոգեհայրն էք Զատաղի եւ Զատարմութեան: Այս սկիիին մէջ միախառնուած են հայ ժողովուրդէն բխած սիրոյ մարգարիտ, կաթօտի ձայն եւ խաղաղութեան օրօր:

Եւ օր մը, երբ Զայր Աստուած որոշէ բարձրացնել ձեզ այս աշխարհէն, պիտի ըսէ. «Եկո՛ւր, որդեա՛կ, դուն, որ հաւատքը պահեցիր, բարի գործերը կատարեցիր, մտի՛ր քու Տիրոջը արքայութեան մէջ»:

ՇՆՈՐՀԻՒ ՀՅԳ-ԻՆ, ՆԱՀԱՏԱԿ ՏՂՈՑ, ՆԱԵՒ ԻՐ ԿԱՄՔԻՆ, ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅՈՒԹԻՒՆԸ ՊԱՏՈՒՈՎ ԴՈՒՐՍ ԵԿԱՒ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԲՈՎԷՆ

Արդարեւ, այսօրուան մեր հաւաքը, մեր ակումբին դիմաց եւ մեր ժողովուրդին իսկ մասնակցութեամբ, խորքին մէջ հաւաքական-ազգային պատարագ մըն է, որ ունի իր հնչեղութիւնն ու թելադրականութիւնը:

Յնչեղութեամբ լիացած պատարագ մը, որովհետեւ պէտք չէ մտահան ընել այլ ճշմարտութիւն մը եւս, որ դաշնակցական երիտասարդութիւնն ու ակումբներ պիտի չկարենային տոկալ, դիմադրել, ապրիլի եւ ապրեցնել, եթէ երբեք իրենց թիկունքին չունենային հայ ժողովուրդի Նիւթական ու բարոյական աջակցութիւնը:

Այլ խօսքով՝ մենք չենք կրնար մոռնալ շրջաններու թէ հայահոծ թաղամասերու մէջ ապրող հայութեան անսակարկ նուիրումը, յատկապէս ահաւոր պատերազմի տարիներուն: Չենք կրնար մոռնալ երբեք մեր մամիկներուն եւ պապիկներուն աղօթքը, ամէն անգամ որ շրջաններ կ'ենթարկուէին աստիկ մմբակոծումներու: Չենք կրնար մոռնալ պահակութիւն ընող տղոց սնունդի եւ այլ կարիքներու ապահովումը ստանձնած շրջանի բնակիչներու յանձնառութիւնը:

Աւելին. ինչպէ՛ս կրնանք մոռնալ եւ միշտ երախտապարտ չըլլալ ԼՕԽ-ին, որ անմաքոր ծառայութեամբ թեւ եւ թիկունք էր ակումբին, տղոց եւ ժողովուրդին: Այս եզակի կազմակերպութեան անդամակցած մեր մայրերը, քոյրերն ու կողակիցները տիւ եւ գիշեր աշխատեցան իբրեւ թիկունքի զինւորներ, որպէսզի մեր պահակ տղոց կարիքներուն հասնին եւ վիրաւոր հայորդիներու ցուերը ամոքեն:

Ո՛վ է ըսեր, որ պատերազմները ցանկալի են եղած, ո՛վ է ըսեր, որ հարազատի, եղօր, զակի ու ընկերոջ մահը, կորուստը կամ Նահատակութիւնը դիւրին ընկալելի հասկացութիւն է եղած, այդ ալ՝ մեզի համար: Ո՛չ, երբեք: Պատերազմները միայն ցաւ ու տառապանք են պատճառած, արիւն հեղած եւ երկիրներ քանդած: Այդուհանդերձ, բուռ մը լիբանա-Նահայութիւն, ապաւինած իր հաւատաւոր ու քաջարի տղոց, կը գերազանցէր ինքզինք եւ կը նետուէր պարտադրուած պատերազմի դաշտ: Ծիշդ է, որ քաջերու առնթներ եղան Նաեւ վախկոտներ եւ դասալիքներ, եղան փախուստ տուողներ, ինչ որ բնական երեւոյթ է կարծես, ազգերու պատմութեան մէջ:

Բայց եւ այնպէս եղան Նաեւ գերազանց ու հրաշալի տիպարներ, անակնաւ եւ տոկուն սրտի տեր տղաներ, երեցներ ու պատասխանատուներ, որոնք ստեղծուած ճգնաժամին մէջ ցուցաբերեցին բացառիկ արիւնքի եւ վճռակամութիւն: Անոնք, այս տեսակի տղաքը, իրենց հոգիի մեծութեամբ ըմբռնեցին պահու լոշութիւնը եւ տեր կանգնեցան հայու արժանապատուութեան:

Մեր գաղութի փրկարար տղաքը, դաշնակցական «խենթ»-երը **ռուպենիւտեան** ժապաւեններ չխաղացին, դեռասանութիւն չըրին, չէին տրված այդպէս ըլլալ, փառք ու պատիւ չմուրացին, այլապէս ալ անոնք կառչած մնացին իրենց դաշնակցականի երդումին, ուխտին ու պատմութեան թելադրանքին:

Անոնք տարիներ շարունակ գործեցին լո՛ւռ, ծառայեցին անսակարկ ու անաղմուկ, սիրեցին մեր ժողովուրդը եւ չլքեցին մեր թաղամասերը, չհեռացան մեր ակումբներէն, եղան վիրաւորի աջակից եւ մամիկի ու պապիկի կողքին, 15 երկար տարիներ շարունակաբար:

Ու այսպէս իրւեցին լիբանանահայութեան փառքի տարիները եւ դարձան գաղութահայ կեանքի յիշատակելի տղաները:

Ի սրտէ կ'ողջուեցան ձեր այս ձեռնարկը: Թոյլ տուէք, որ քանի մը միտք այլ ԼԵՄ-ականներուն երբեք դուք մէկ կողմէ դաշնակցական ակումբներու ապագայակերտ սիւներն էք, ապա, միւս կողմէ, դուք մեր Նահատակ ընկերներու ժառանգորդ սերունդներ էք. պարտաւոր էք տեր կանգնիլ անոնց կտակին եւ յանձնառութեամբ շարունակել անոնց ուղին:

Այո՛, ձեր երիտասարդ ուներուն բեռնաւած է այն ծանր լուծը, դաշնակցական կերպարի նորոգիլ ըմբռնումը, յայտնաբերումը, ջրդեղումը, թարմացումը կատարել:

Զաւատացողն ենք, որ ձեր ստացած գաղափարական դաստիարակութեամբ, ուսումով, դաշնակցական ողջ պատմութեան առաւել իւրացումով, ազգային վսեմ արժեքներու հանդէպ հայալմայել ծօնեցում եւ կեցուածք ցուցաբերելով՝ կարող պիտի ըլլաք դիմալայել կեանքի փորձութիւնները եւ տեր կանգնիլ դաշնակցական հաւատոյ հանգանակին: Այո՛, պիտի կարենաք դէմ դնել մեր օրերու յռոյի եւ այլասերիչ երեւոյթներու եւ հպարտութիւն կանգնիլ ձեր ժողովուրդին դիմա՛ն:

Փաստօրէն, այս ձեռնարկը դասական բնոյթ ունենալով հանդերձ, անկիւ յոյժ պարտաւորեցնող է, որովհետեւ հոս չենք հաւաքուած որբալու, այլ՝ յիշատակելու մեր հերոսներու սխրանքը, աստուածալմայել քաջութիւնն ու մահուան դէմ ելելու անոնց հօգի կամքը:

Չենք հաւաքուած հոս եքեիաթ պատմելու, այլ՝ իսկական, արեամբ գրուած պատմութեան դասեր քարելու ու զանոնք նորահաս սերունդին փոխանցելու:

Չենք հաւաքուած հոս Նահատակներ տարբերակելու, այլ՝ ընդհակառակը, բոլոր Նահատակներուն թանկագին արեան ղօղանքը լսելու եւ անով զօրանալու:

Չենք հաւաքուած հոս իրաւասկան խօսքեր ուղղելու եւ ստանալու, այլ՝ մեր Նահատակ տղոց խիզախութեան ընդմէջէն աւելի՛ հայանալու, աւելի՛ հայրենասէր եւ ինքնաճանաչ դառնալու:

Ըսուած է, չէ՛, եւ արդարօրէն, որ ԼԵՄ-ը դաշնակցական երիտասարդութեան դարբնոցն է, ազնիւ, գիտակից, քննական միտք ունեցող, չարքաշ, մարտունակ, ծառայաքոր ու ստեղծարար երիտասարդութիւն պատրաստելու հոնքն է, աւելին. ազգային ու դաշնակցական արժեքներու տեր ու պահպան եղող միաւորն է:

Եւ որո՞ւք՝ «Րաֆֆի» մասնաճիւղի ԼԵՄ-ականներ, վերոնշեալ արժեքները կրող եւ անոնց անկեղծօրէն ծառայող մեր օրերու երիտասարդ-երիտասարդուկներն էք:

Սիրելի՛՝ ներկայներ, թոյլ տուէք զոգտրիկ պատմութեամբ մը իր լրումին հասցնել մեր խօսքը: Պատմութիւն մը, որ իրական կեանքէ առնուած է եւ լոյս տեսած՝ հայ մամուլի էջերուն, դէռ 1980 թուականին, եւ զայն ընթերցած էիք աւելի ուշ՝ գիրքի մը ծածկին տակ:

Պատմութիւն մը, որ չափազանց զգացական եւ յուզիչ է, բայց իր մէջ կը խառնուէր հայու ազնիւ կարագիւրը, հայ ծնողքի լաւագոյն պատկերը եւ լիբանանեան դաժան պատերազմի օրագրութիւնը:

Գրողը արձանագրած է, թէ օր մը իր ընկերոջ հետ զացած էր համեստ ճաշարան մը, **սենտուիչ** գնելու: Կը մտնէ մարդ մը, որ հազիւ 40-45 տարեկան էր: Ան, ողջունելէ ետք ներկայները, կը տեղադրուի անկիւն մը գտնուող սեղանի մը ետեւ: Բիջ

ետք ան կը դիմէ ճաշարանի տիրոջ՝ ըսելով. սիրելի՛ բարեկամ, ես եկայ, գիտե՛ս ինչ է խնդրանքս, գաւաթ մը ոգեւից ըմպելի եւ իմ սիրած երկու երգս»: Այդ միջոցին մարդը գրպանէն կը հանէ նկար մը եւ կը կռթնեցնէ մոխրամանին: Ապա, ան նկարին նայելով կը սկսի ցած ձայնով խօսիլ ու երգել: Անոր դէմքին ակնյայտ էին յուզումի եւ արցունքի շիթերը:

Պահանջած երգին կը յաջորդէ այլ երգ մը, նոյնպէս յուզիչ: Անոր բերանը միշտ շարժումի մէջ էր: Գրողը կ'ուզէ գիտնալ, թէ ի՞նչ են այդ մարդուն փսփաացած բառերը, անոնք քանի մը Նախադասութիւն էին: Ան կ'ըսէր. «Տղա՛ս, դուն մեռար ազգիդ համար: Դուն մեռար, պահելու համար քու մօրդ, քրոջդ եւ ազգիդ պատիւը: Տղա՛ս, մի՛նակ չեմ ձգեր քեզ. մօտ օրէն քովդ կ'ըլլամ: Տունը, խանութը, ընկերներդ եւ ամէն մարդ, որ Նահատակ բառին իմաստը գիտէ, քու եւ քու միւս ընկերներու մասին կը խօսի հոս»: Եւ ան կը շարունակէ երգել: Պատմողը, չկարենալով համբերել, կը մօտենայ եւ կը հարցնէ չափահաս հայորդիին. «Զայրի՛կ, ինչո՞ւ կու լաս, ինչո՞ւ միշտ նոյն երգը կը խնդրես ունկնդրել»:

Զայրորդին, ի պատասխան իրեն ուղղուած հարցումին, կը սկսի պատմել, «Ես, տղա՛ս, զաւակ մը ունէի, անուրը Չաւէն էր: Ամէն օր, երբ դպրոցէն վերադառնար, դասերը աւարտելէն ետք, կը Նստեցնէի մօտս եւ իրեն Գեորգ Չաւուշի, Սերոբ Աղբիւրի եւ այլ ֆետայիներու կատարած քաջագործութիւնը կը պատմէի: Ան միշտ կը լսէր ու կ'ըսէր. «Զայրիկ, ես ալ կրնամ ըլլալ այդ ֆետայիներուն նման»: Պատասխան միշտ կ'ըլլար. «Ինչո՛ւ չըլլաս, անկարելի բան չկայ»: Այս դաստիարակութիւնը տարիներ կը շարունակուի, մինչեւ որ օր մըն ալ քովս գալով կ'ըսէ. «Զայրի՛կ, գիս ակումբ արձանագրե՛»:

«Երբ տեսայ, որ շարուն կրկնէ ու կը պնդէ իր այս առաջարկը, գինք պատանի արձանագրեցի: Մէկ տարի չանցած՝ կը պատահի Նապայանի կոնիւր, ուր կը Նահատակուի իր սիրելի ընկերը: Ընկերոջ մահէն ետք, Չաւէն կրակի կտոր մըն էր այլեւս: Երբ քիչ մըն ալ կը մեծնայ, կը պատահին սեպտեմբերեան բախումները, ուր տղաս կը հասնի իր Նապայանի՛ Նահատակուելով Գեորգ Չաւուշի եւ Սերոբ Աղբիւրի նման:

«Իսկ թէ ինչո՛ւ կը սիրեմ «Դաժան կուռմ դուք ընկաք» երգը, որովհետեւ երգին կէսը իմ զակկիս մասին է, իսկ միւս բաժինը՝ տուն վերադարձող հայ զաւակներու: Իսկ յաջորդ երգը՝ «Բարի հայրիկ խրատներդ լսել եմ», իմ զակկիս երգն է, որ միշտ կ'երգեմ: Ան խրատներս լսեց եւ հասաւ իր մուրագին: Այս է իմ պատմութիւնը, սիրելի՛ տղաս»:

Այո՛, այս է լիբանանահայութեան դաժան, բայց փառքի տարիներու պատմութեան խտացումը, որուն յիշատակուելով կը կատարենք այսօր: Եւ մեր կարգին կ'ուզենք անցնել, թէ տակաւին գոյութիւն ունի՛ւ Չաւէնի հօր նման հայրեր, որոնք իրենց զաւակներուն հայոց պանծալի պատմութիւնը կը պատմեն եւ զանոնք ակումբ կ'առաջնորդեն, գոյութիւն ունի՛ւ Չաւէնի մօր նման քաղցրաղէմ մայրեր, որոնք իրենց անուշիկ զաւակները հայ դպրոց, եկեղեցի եւ մշակութային միութիւններ կ'ուղարկեն կամ կ'արձանագրեն՝ քաջ հաւատալով, որ միա՛յն հայ վարժարանին հայ եկեղեցւոյ ու հայ ակումբին մէջ է, որ հայու զաւակներ կրնան տուրք Մետրոպաշունցի ստեղծած մայրենին սորվիլ, Սասունցի Դաւիթ առասպելի յաւերժական ուժին տիրանալ

«ՅՈՐԴԱՆԱՆԻ ՀԱՅԵՐԸ» ԳԻՐՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Հայկազեան համալսարանի Հայկական սփյուռքի ուսումնասիրության կեդրոնի կազմակերպած «Սուրիոյ հայերը» եւ «Յորդանանի հայերը» գիրքերու ներկայացումին, որ տեղի ունեցաւ չորեքշաբթի, 2 հոկտեմբեր 2019, երեկոյեան ժամը 7:00-ին, Հայկազեան համալսարանի հանդիսասարահին մէջ, ժամանակի սղութեան պատճառով այս գրութենէն համառօտ բաժին մը միայն ներկայացուեցաւ: Ստորեւ՝ «Յորդանանի հայերը» 520 էջ գիրքին Յարութ Զեքիճեանին պատրաստած ամբողջական ներկայացումը, ներառեալ՝ փառլոր փոյնթի նկարները:



Մերձաւոր Արեւելքը եւ հայ գաղթականներուն զանազան հանգրուանները՝ Սուէշայէն Աքապա, ապա Նաւով Փոր Սալիտ, ապա Կիլիկիա ուղեւորութիւնը:

Ներածական

Ողջունելի եւ թանկարժէք իրագործում մըն է այս գիտաժողովներու շարքը եւ բովանդակութեան իրատարակութիւնը, որ թէեւ ամբողջական պատմութեան կարելի չէ նկատել, սակայն, իբրեւ հիմնաքար, կը ծառայէ աւելի խորունկ հետազօտութեան: Չնայած հետազոտութեան համալսարանը եւ Հայկական սփյուռքի ուսումնասիրութեան կեդրոնը, որ ձեռնարկած է այս վաւերագրական հսկայ աշխատանքին:

Իբրեւ այս գիտաժողովին չմասնակցած անձ՝ տեղեակ չեմ գիտաժողովին մթնոլորտին եւ այնտեղ կատարուած ասուխտէն, ուստի միայն գիրքին բովանդակութեան եւ 8 տարի իբրեւ մասնագետ՝ Թագաւորական գիտական կեդրոնին (Royal Scientific Society) մէջ, Յորդանան ապրած եւ հայկական գաղութին մէջ ունեցած դերակատարութեան եւ փորձառութիւններուն վրայ հիմնուելով է, որ պիտի արտայայտուի:


Կարդալէ ետք զեկուցումները, ոմանց մասին կրնամ հաստատել հետեւեալը.

1. Առանց որոշ ժամանակ Յորդանան ապրած ըլլալու եւ շաղկելու Յորդանանի ժողովուրդին եւ այնտեղ ապրող հայութեան հետ, միայն ակադեմական արխիւային ուսումնասիրութիւն կատարելով, երբեք բաւարար չէ հեռուն, յատկապէս ընկերային-կրօնական եւ կենցաղային-միջավայրի հարցերու մասին եզրակացութիւններու յանգիլ:
2. Պէտք է ուշադրութիւն դարձնել կողմնակալ, կամ միակողմանի զեկուցումներուն, ուր վրիպումով, կամ դիտումաւոր կերպով զաղութիւն կարգ մը կարեւոր իրադարձութիւնները եւ «նշանաւոր» հայերը զանց կ'առնուին:
3. Խորհրդային ժամանակաշրջանին պատրաստուած, Յորդանանի խորհրդային դեսպանատան եւ Սփյուռքի հետ կապի կոմիտէին խմբագրած, պոլշեիկեան քարոզչութեամբ լեցուն միակողմանի զեկուցումը իր ամբողջութեամբ ներկայացնելը, առանց վերցնելու այժմ անհեթեթ է համայնքին մէջ պառակտում սերմանող բաժինները, անընդունելի կը գտնեմ:
4. Խիստ վերապահութիւն կը յայտնեմ «ցեղասպանագետ» Հիմար Զայգերի զեկուցումին, որուն մասին կ'անդրադառնամ վարը:

Այս գիտաժողովի նիւթերուն մեծամասնութիւնը կը ներկայացընէ քսաներորդ դարու Հայոց ցեղասպանութեան պատճառով Յորդանան աքսորուած հայերուն մասին ուսումնասիրութիւններ՝ ընդհանրապէս իբրեւ գլխաւոր վկայութիւն օգտագործելով Վահրամ Տատրեանի թանկարժէք օրագրութիւնը: Բացառութիւն է Զլոտ Մուրաֆեանի ուսումնասիրութիւնը, որ 12-էն 14-րդ դարերու ժամանակաշրջանին մասին գրած է: Յայտնի է, որ հայերը Յորդանանի տարածքին բնակութիւն հաստատած են նախաքրիստոնէական օրերէն, Մեծ Տիգրանի օրօք եւ աւելի առաջ:



Մատապայի Երուսաղէմի քարտէսին խճանկարը



...եւ Երուսաղէմի պարիսպէն դուրս 6-րդ դարու հայերէն խճանկար՝ «Աղօթք անձանթ հայ գիւտորներուն»

Կ'արժէ նշել, որ արդէն հիւսկերորդ դարուն Երուսաղէմի մէջ հայկական թաղ կար, որուն փաստը ամրագրուած է Յորդանանի Մատապա քաղաքի Ս. Գեորգ եկեղեցւոյ գետինը տեղադրուած 542 թուականի բիզանդական խճանկարէ պատրաստուած քարտէսին մէջ (նկարը պիտի երեւի պաստառին վրայ), ուր մատնանշուած է Երուսաղէմի «հայերուն թաղը» (The Mosaic Map of Madaba: An Introductory Guide): Հայերուն թիւը աւելցած է խաչակիրներու արշաւանքներուն ժամանակաշրջանին՝ 11-14-րդ դարերուն:

Վեցերորդ դարու այլ խճանկարի մը մէջ (նկարը պիտի երեւի պաստառին վրայ), որ յայտնաբերուած է 1894-ին Երուսաղէմի պարիսպէն դուրս եւ մօտը՝ հայերէնով արձանագրուած է՝ «Աղօթք ի յիշատակ անձանթ հայ գիւտորներուն» («Ասպարեզ», 19 հոկտեմբեր 2010): 301 թուականին քրիստոնէութիւնը իբրեւ պետական կրօն ընդունելէն ի վեր Երուսաղէմը ուխտավայր եղած է հայութեան համար, եւ չորրորդ դարուն արդէն այնտեղ կային հայկական վանքեր եւ եկեղեցիներ:

Պէտք է հաստատել, որ արդի Յորդանան երկիր հասկացողութիւնը իր մէջ կ'ընդգրկէ նաեւ Պաղեստինը՝ Երուսաղէմով միասին, մինչեւ 1988, երբ Հիւսէյն թագաւորը Արեւմտեան ափը Երուսաղէմով միասին, վերջնականապէս յանձնեց Պաղեստինեան ազատագրութեան կազմակերպութեան՝ ՊԱԿ-ին, առանց նկատի առնելու Իսրայէլեան գրաւումը: Հետեւաբար, առանց Պաղեստինի եւ յատկապէս Երուսաղէմի հայութեան ու հայոց պատրիարքութեան հնադարեան ներկայութեան հարուստ պատմութեան, որ կը պակսի այս գիտաժողովէն, Յորդանանի հայութեան պատմութիւնը ամբողջական չ'ըլլար:



Երբեմնի հայկական Զարաթ բերդին եւ քաղաքին համայնապատկերը:


Պիտի փորձեմ գիրքին մէջ լոյս տեսած գրութիւններուն շարքով, ինձի համար աջառու բովանդակութիւն ունեցող հատուածներուն մասին կարծիքս յայտնել:

1. Դոկտ. Հիւստ Ապու Շապր:
- Ա. 1915-էն առաջ Օսմանեան կայսրութիւնը դէպի Յորդանան տեղահանութիւններ կատարած էր՝ չերեզնեւորու, չէջններու, մարդքցիներու, եգիպտացիներու եւ այլն, իրաքեանցիք համայնքին յատկացնելով հողամասեր կամ գիւղեր, սակայն հայ տարագիրներուն, որոնք թիւը շատ աւելի մեծ էր՝ շուրջ 20 հազար (պէտք է ըլլայ 30 հազար), ո'չ մէկ հողային կամ բնակավայրի յատկացում կատարուած էր, էջ 25:
- Բ. 1800-ական թուականներու ամուսնութեան տոմարներուն մէջ կը հանդիպինք հայ կիներու, որոնք բնիկ արաբներու հետ ամուսնացած են: Որո'նք էին այդ հայ օրիորդները, եւ ո'ր կ'ապրէին անոնց ընտանիքները: Ուստի, տոմարներուն աւելի խորունկ ուսումնասիրութիւնը կրնայ շատ աւելի յստակ պատկեր մը ներկայացնել 1915-էն առաջ հայերու ներկայութեան մասին, էջ 24:
2. Զլոտ Մուրաֆեան:
- Ա. 12-րդ դարու վերջաւորութեան Յորդանանի Զարաթ բերդաքաղաքը իր հայկական եկեղեցիով քանի մը տասնեակ տարի եղած է հայկական՝ հայերով բնակուած եւ կառավարուած:
- Պէտք է ըսել, որ նախաքսաներորդ դարու այսպիսի շահեկան ուսումնասիրութիւններ կը պակսին այս գիտաժողովէն: Պատմութեան ընթացքին հիւսիս-հարաւ եւ արեւելք-արեւմուտք առեւտը-



1. Հայաստանի կայսրութիւնը ԲԱ 95-66 Հայաստան աշխարհէն մինչեւ Կիլիկիա, Կապադովկիա, Միջին Արեւելք, մինչեւ հարաւ՝ Երուսաղէմ

րական կարաւաններուն ապահով ուղեւորութիւնը մեծ կարեւորութիւն ունեցած է: Օրինակ՝ Արամ Նահապետը ԲԱ շուրջ 1813-ին վերահսկողութեան տակ առած էր Փոքր Ասիա եւ Եգիպտոս տանող ճամբաները, շուրջ՝ 1800 քմ, կայազօրներ հաստատելով Արամաիլիէն մինչեւ Եգիպտոս տանող քաղաքներուն մէջ, ներառեալ՝ այժմու Յորդանանի շրջանը: Նոյնը ըրին խաչակիրները, սակայն՝ Երուսաղէմ մինչեւ Երուսաղէմ, կարգ մը կայազօրներ վստահելով հայ իշխաններուն:




...եւ Կազա եւ 2. Յորդանանի հայերու բնակած քաղաքները եւ երկաթուղին:

Աստուածաշունչին մէջ (Մարգարեութիւն Եգեկիէի գլ. ԻԷ, 14-րդ համար), Եգեկիէ մարգարէն, որ ապրեցաւ ԲԱ 622-570, գրած է, որ հայերը Փիւնիկիէ Սուր քաղաքի շուկային մէջ ծիւր եւ ջորիներ կը վաճառէին, ուրեմն ահաւասիկ ԲԱ 6-րդ դարուն շրջանին հայերու ներկայութեան փաստ մը:

Մեծ Տիգրանի կայսրութիւնը ԲԱ 95-55 թուական հասաւ մինչեւ Եգիպտոսի սահմանները՝ ընդգրկելով ամբողջ արեւելեան Միջերկրականը՝ Սուրիան, Փիւնիկիէն, այժմու Պաղեստինն ու Յորդանանը:

Միջնակեալ՝ հայրս կը պատմէր, որ 1930-ական թուականներուն, երբ բեռնակառքի շարժավար երեք երօր հետ արաբական երկրները ապրանք կը փոխադրէին, ծանօթացած են «**աւանգէ**» (այժմ աշիրթիւն՝ ցեղախումբին, որ Սուրիոյ Գամիշլի քաղաքէն մինչեւ Մուտական Արաբիա եւ Զուէթ տարածուած էր, եւ անոնք ամէն կարելուր հանգրուանի՝ կայանի մէջ ներկայութիւն էին, դիւրութիւններ մատուցելով իրենց ծանօթներուն: Մինչեւ այսօր անոնք ներկայութիւն են Սուրիոյ, Իրաքի եւ Արաբական թերակղզիին մէջ:

3. Հիմար Զայգեր:
- Եւ վերապահութիւնս կը յայտնեմ Զայգերի այս ուսումնասիրութեան, որ կարծեք, թէ կը փորձէ մեղմացնել ցեղասպանութիւն գործադրած ճեմալ փաշային պատասխանատուութիւնը:
- Ճեմալ փաշան օսմանեան չորրորդ բաժնի իրամասնատարը եւ Մեծ Սուրիոյ կառավարիչն էր, եւ շրջանի բոլոր արաբներուն իսկ որակումով ցարդ «արիւնարբու դահիճ» **ժազգար, սաֆֆահ**» անուանուած է: Զայգերը ճեմալ փաշայի մասին չհիմնաւորուած երկու սխալ եզրակացութիւններու կը յանգի: Առաջինը՝որ իբր թէ դէպի Յորդանան աքսորեալ հայերուն հանդէպ «բարեացակամ» էր, եւ երկրորդ, աւելի՝ վտանգաւորը, կ'եզրակացնէ, որ այս պատճառով, ուրեմն, Հայոց ցեղասպանութիւնը ծրագրուած չէր...լաւ կազմակերպուած չէր կ'ըսէ... էջ 40, 41, 46, մանաւանդ էջ 70:



Հիւսիսի Իրաիտ քաղաքը, հեռուն՝ Լիբանանի Շէյխ լեռը:

Չարմանալիս այն է, որ ճեմալ փաշային իրամասնատարութեան տակ էր նաեւ ամբողջ Սուրիան, անապատները, Հալէպն ու Տեր Չօրը, ինչո՞ւ ան «բարեացակամ» չէր այնտեղ... Մա՛նաւանդ իր եզրակացութեան վերջին նախադասութիւնը (էջ 105), ուր թէեւ ցեղասպանութիւն եզրը կը գործածէ, սակայն տարօրինակօրէն կ'ըսէ, որ Երիտասարդ թուրքերու իշխող կուսակցութիւնը ամբողջ Օսմանեան կայսրութեան մէջ միատարր ցեղասպանական քաղաքականութիւն չէր որդեգրած...

Պէտք է իշխեցնել, որ թրքական գիւտորական դատարանը, այլ պատասխանատուներու կողքին, սպանդներ կազմակերպելու համար մահուան դատապարտեց նաեւ ճեմալ փաշան, իսկ մահապիճիւր գործադրեցին Ստեփան Շադիկեանը, Արտաշէս Գեորգեանը եւ Պետրոս Տեր Պօղոսեանը 21 յուլիս 1922-ին Թիֆլիսի մէջ, «Զեկայի» շէնքին իսկ առջեւ:

ՅԱՐՈՒՐ ԶԵԿԻՃԵԱՆ

3 Հոկտեմբեր 2019 (Շաբ. 1)

ՀԱՄԱՑԱՆՑԸ 50 ՏԱՐԵԿԱՆ Է...

«ԼՕ»: 50 տարիներ առաջ այս երկու գիրքերով խորհրդալուր վանկը կը մտնե պատմության մեջ:

29 հոկտեմբեր 1969-ին ULLA Քալիֆորնիոյ համալսարանէն ուսանող մը՝ Զարիկ Զլայն կը փորձէ համալսարանին մէջ գտնուող SDS sigma 7 «Համակարգիչէն» կապ հաստատել աւելի քան 550 քմ հեռու գտնուող Սան Ֆրանսիսքոյի Սթանֆորտի կեդրոնին SDS 940 համակարգիչին հետ: Ան կը սկսի ստեղծաշարին վրայ տպել «Login» բառը (կապուի), սակայն առաջին երկու գիրքերէն ետք կապակցութիւնը կը դադրի՝ որկնելով միայն առաջին երկու գիրքերը. երկրորդ փորձին է, որ հաջորդապէս կ'ընթացի դարձեալ կը հաստատուի: Ծրագրին պատասխանատուն էր Լեոնըրտ Զլայնը, որ ուսուցիչը, որ բանակին հաշուոյն կ'աշխատէր դրութեան մը վրայ՝ դիւրացնելու համար բանակի եւ քաղաքացիական հաստատութիւններու միջեւ աւելի արագ հաղորդակցութիւնը: Այս ձեռնարկն է համացանցի դրութեան նախնական ձեւը՝ ԱՐՓԱՆԵՐ:

Սակայն ԱՐՓԱՆԵՐ շատ շուտ կը ձեռքբաւտի իր զինուորական



դրութենէն եւ շուտով կը տարածուի համալսարանական շրջանակներու մէջ: 1990-ին այս ցանցը կը դադրի բանելէ, եւ անոր կը փոխարինէ համացանցը, որ կը միաձուլէ գոյութիւն ունեցող բոլոր դրութիւնները: Այժմ 85 տարեկան Զլայնը կը խոստովանի, որ ինք պարզապէս մտածած էր համակարգիչներուն կամ համա-

կարգիչներուն եւ համակարգիչներուն միջեւ, կապ հաստատել եւ ո՛չ մարդ արարածէ մարդ արարած, ինչպէս կը պատահի այսօր ընկերային ցանցերուն միջոցով: Ժամանակի ընթացքին համացանցը դարձած է հաղորդակցելու առաջին միջոցը: Այժմ աշխարհի շուրջ աւելի քան 4 միլիարդ անձեր կը գործածեն համացանցը:

ԱՐՅԵՍՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԵՆ



■2010 թուականին Զինեթիք Չեֆիր կոչուած թռչող մարդամեքենան կրցաւ անդադար թռչիլ 14 օր, 22 վայրկեան եւ 8 երկվայրկեան:



■1980-ական թուականներուն 9MB չափով երաժշտութեան ֆայլ մը համացանցին արձանագրելը կը տնէր 2,9 օր:

■2001 թուականին Նիւ Եորքի մէջ գտնուող վիրաբուժներ յաջող գործողութիւն մը կատարեցին մարդամեքենայի մը միջոցով, 6200 քմ հեռու՝ Ֆրանսայի մէջ գտնուող հիւանդի մը վրայ:

■Միացեալ Նահանգներու Միշիկըն համալսարանի մասնագետներ կրցան շինել 1 մմ մեծութեամբ ամբողջական համակարգիչ մը: Այս մանր համա-




կարգիչը օժտուած էր յիշողութեամբ, բարդելով եւ մանր փոփոխելով:

■1973 թուականին Մոթորոլայի շինած առաջին բջիջային հեռաձայնի բարդը կրնար բանիլ միայն 30 վայրկեան: Այս 1.1 քիլօ կշռող հեռաձայնի բարդը լիցքաւորելը կը կարօտէր 10 ժամուան:

■Յունիս 1993-ին համացանցին վրայ հասցնելուն թիւը 130 էր: Այժմ ան կը հասնի աւելի քան միլիարդի:

■Աշխարհի ամենէն փոքր կիթառին՝ Նանօկիթառ 2-ին երկարութիւնը կը հասնի 0.025 մմ-ի (նուազ քան՝ մարդկային մարդուն մագի թելին հաստութիւնը): Այս կիթառին վրայ կարելի է նուազել, սակայն ո՛չ մատներով, այլ՝ մանրադիտակային լեզուով ճառագայթով:



■1000 անձեր, որոնցմէ իւրաքանչիւրը կատարելով թուաբանական հաշիւներ ամեն վայրկեան, պետք ունին 60 հազար տարիներու՝ կատարելու համար Նոյն հաշիւները, զոր Զրեյ Թայթըն **սուփօր** համակարգիչը կրնայ կատարել մէկ երկվայրկեանէն...

ԺԱՄԱՆՑ



Կրնա՞ս գտնել երկու պատկերներուն միջեւ գոյութիւն ունեցող ութ տարբերութիւնները:



Կրնա՞ս գտնել պատկերին համապատասխանող շուրջը:



Կրնա՞ս գտնել այն մանրամասնութիւնը, որ կը գտնուի չորս պատկերներուն մէջ:



Կրնա՞ս գտնել գաւաթին հասցնող ճամբան:

ՓԱՅՏԷ ՀԱՄԱԿԱՐԳԻԶՆԵՐ



Անոր անունը Ուուա Լափթօփ 2.0 է: Անոր արտաքին եւ ստեղծաշարին բաժինները փայտէն են. ան կրնայ նաեւ բաւիլ արեւի ուժով:

Այս համակարգիչը հնարուած է Զարուային Ամերիկայի մէջ, Փերուէն



ընտանիքի մը կողմէ: Ընտանիքը այս ձեռնարկն ուզած էր այս արհեստագիտութիւնը մատչելի դարձնել ամենէն աղքատներուն՝ առանց մոռնալու բնապահպանութիւնը:

մրցանակ, եւ բազմաթիւ հաստատութիւններ հետաքրքրուած են զայն բաժնելու երկրին աղքատ շրջաններուն մէջ: Գիտելի՜ր, թէ ուուա Փերուի մէջ խօսուած քելուա լեզուով կը նշանակէ «պզտիկ»:

Պատրաստեց՝ ՇՈՂԻԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

ԱՖՀԻԼ AFHIL
ARMENIAN MUTUAL FUND

20 Years of Commitment

The BEST WAY to
Find Yourself is to
LOSE YOURSELF
in the Service of
Others

Mahatma Gandhi



www.afhil.com | AFHIL Mutual Fund
Bourj Hammoud, Arin Center, 4th Floor | Tel. 01 242 556/7

ԶԻԻԱՆ ԱԻԵՏԻՍԵԱՆԻ «ԴՐԱԽՏԻ ԴԱՐՊԱՍԸ»...

Ծարունակուած 4-րդ էջէն

կանին՝ Թալիշի անկման օրը, Ռոպերթը ձգած է գիւղ՝ գերեվարութեան մէջ, ապա իւրացուցած անոր՝ մարտի դաշտին մէջ առնուած լուսանկարները:

Լիթվայի, Գերմանիոյ, Ֆրանսայի, Միացեալ Նահանգներու, Չեխիոյ, Պուլկարիոյ եւ Իտալիոյ հետ համատեղ արտադրութեամբ ստեղծուած ժապաւենին մէջ նկարահանուած են համաշխարհային ճանաչում ունեցող դերասաններ: Գլխաւոր դերերով հանդէս եկած են՝ գերմանացի յայտնի դերասան Ռիխարտ Չամելը, Թաթիանա Սպիվաքովան՝ Ֆրանսայէն, Լեոնարտա Պոփթընոսցովասը՝ Լիթվայէց, Սօս Ջանիբեկեանը՝ Ղալաստանէն, Նայիրա Չաքարեանը՝ Միացեալ Նահանգներէն:

Երեւանեան ցուցադրութենէն ետք «Դրախտի դարպասը» հոկտեմբեր 19-ին ցուցադրուեցաւ Նաեւ Ստեփանակերտի մէջ: Ժապաւենը շուտով շրջելու է ամբողջ աշխարհի՝ մասնակցելու միջազգային շարժապատկերի փառատօներուն:

ՍՏԱՅԱՆՔ

«ՄՏՈՐՈՒՄՆԵՐ» ՍՓԻՌՔԱՅԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՍՏԱՆԻ ՍԵՄԻՆ

Հեղինակ՝ ԵՐՈՒԱՆԻ Դ. ԶԱՍՈՒՆԻ
Հրատարակութիւն՝ Ե. Դ. Զ.
Տպարան՝ DESIGN KESDENIAN
Պէյրուք, 2019

«ԴԻՄԱՔԱՆԴԱԿՆԵՐ»

Հեղինակ՝ ԵՐՈՒԱՆԻ Դ. ԶԱՍՈՒՆԻ
Հրատարակութիւն Ե. Դ. Զ.
Տպարան՝ DESIGN KESDENIAN
Պէյրուք, 2019

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԳՕԳՕ Գ. ՏԵՄԻՐՃԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի կիրակի, 10 նոյեմբեր 2019-ին, Հայաշէնի Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԺԱՄԱՆՅ

ԽԱԶԲԱՌ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1											
2											
3											
4											
5											
6											
7											
8											
9											
10											
11											

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

1. Շողոքորթել - Ցոփ:
2. Նուազ - Դի:
3. Բազմութիւն - Լուսաւորիչի ձեռնադրութեան վայրը:
4. Հօլովակերտ մասնիկ - Համեմուած կերակուր:
5. Երասի գետի ձուկ - Ձայնանիշ:
6. Մուկերու ծուղակ - Սուրիական քաղաք:
7. Ուղղեակ - Թաւուտ:
8. Տուն - Ցուցական ածական:
9. Խաղախորդ - Ընդունարան:
10. Նմանապէս (հակ.) - Մեկուն - Ձայնանիշ:
11. Աստուած - Խաղողի կուտ - Լարաւոր հին նուագարան:

ՈՐԴԱՅԱՅԵԱՅ

1. Սոխորդ ծնած հայ ֆետայի:
2. Մանչ - Այբուրբենէն - Կրկնուած ձայնաւորներ:
3. Համադասական շաղկապ - Ցանկամոլ:
4. Էական բայ - Չքամուած մեղր - Կլոր բուրգ:
5. Կարճ ու կտրուկ (խօսք):
6. Ոսկիի աստիճան - Արգելական:
7. Պինդ ջուր - Իշխանութեան գաւազան:
8. Թաքուն պայթուցիկ - Խաղ, կատակ:
9. Դժուար հասկնալի:
10. Համեմը շատ - Հասկնալի:
11. Ընչարգելութիւն - Լար, ջուր:

Պատրաստեց՝ Տ. Մ. ԱՂԱԶԱՐԵԱՆ

ՍՈՒՏՈՔՈՒ

	5	9				3
7			8	2		6
			7			2
5				6	4	
	6		1	8		
1						5
	4		2			
			1		9	2
9		3				4

Հորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած գծացանցը բաղկացած է իւրաքանչիւր 9 քառակուսի հաշուող 9 բաժիններէ (3x3): Բացառումի սկզբունքին կիրառումով իւրաքանչիւր քառակուսիի մէջ թուանշան մը գետեղել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ 9 քառակուսիիւնց իւրաքանչիւր բաժին ունենայ 1էն 9 թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով՝ ո՛չ մէկ պարագայի արտօնուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ: Սկսելու համար՝ կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ քառակուսիներուն մէջ գետեղուած են:

ՆԱՆՈՐԴ ԺԱՄԱՆՅԻ ԽԱՂԵՐՈՒՆ ԼՈՒՑՈՒՄՆԵՐԸ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Պ	Ե	ՈՒ	Ս	Տ	Ե	Թ	Հ	Ա	Ս	
2	Ե	Ս	Ս	Ս	Ե	Լ	Թ	Գ	Ս	Ս	
3	Ա	Չ	Գ	Ս	Լ	Ի	Խ	Ա	Ր	Դ	
4	Կ	Ս	Ի	Լ	Չ	Ա	Ր	Կ			
5	Ի	Ե	Ի	Ա	Ե	Լ	Ե	Շ	Ք	Ա	
6	Տ	Ա	Կ	Ա	Ե	Ք	Խ	Ա	ՈՒ	Ս	
7	Ս	Ե	ՈՒ	ՈՒ	Ա	Ր	Ա	Յ	Հ	Ա	
8	Ս	Ե	Ի	Կ	Ա	Յ	Ս	Ի	Հ	Ա	
9	Ե	Լ	Ա	Ս	Ի	Կ	Ս	Ս	Տ		
10	Ի	Ա	Յ	Յ	Լ	Ա	Ս	Ե	Ա		
11	Ա	Լ	Ս	Ա	Կ	Ի	Ե	Տ	Ի		

50 ՏԱՐԻ ԱՌԱՋ 1969 - 2019 9 ՆՈՅԵՄԲԵՐ

ՄԱՆՈՒԷԼ ՄԵՆԵՆԿԻՉԵԱՆ ԼԱՍ ՎԵԿԱՍԻ ՄԵՃ

Լիբանանահայ սիրուած երգիչ Մանուէլ Մենենկիչեան երեքշաբթի, 4 նոյեմբեր, կէսօրէ առաջ օդային ճամբով մեկնեցաւ Լաս Վեկաս (Միացեալ Նահանգներ)

Օդակայան ողջերթ մաղթելու եկած էին, բացի իր հարազատներէն եւ բարեկամներէն, Նաեւ լիբանանցի ծանօթ անձնաւորութիւններ, որոնք Մանուէլին մաղթեցին յաջողութիւն, նոր յաղթանակներ եւ բարձր պահել Լիբանանի անունն ու պատիւը Նաեւ Ամերիկայի մէջ:

Լիբանանի գաւակ՝ Մանուէլ շնորհակալութեան իր խօսքերուն մէջ անգամ մը ես ներկայներուն յայտնեց իր յաղթելու կամքը՝ Լիբանանի անունը ամենուրեք բարձր պահելու ինքնավստահութեամբ:

Մանուէլ Մենենկիչեան Աթենքի երգի փառատօսին իր տարած յաղթանակէն եւ քազինոյի սրահին մէջ տուած հրաժեշտի երգահանդէսներէն ետք, որոնք կը հանդիսանան յաւազոյն վկայութիւնը իր բնատուր արժանիքներուն, աշխարհահռչակ արուեստագետներու կեդրոն Լաս Վեկասի մէջ ես, ուր վեց ամսուան պայմանագրութիւն մը ստորագրած է, պիտի արձանագրէ միջազգային նուաճում մը:

17 ԱՄԻՍ ԵՏԶ...

1968 մայիսին նորակազմ «Լեւոն Շանթ» թատերախումբը, ղեկավարութեամբ երիտասարդ բեմադրիչ Վարուժան Խտըշեանի «Կիւլպենկեան» հանդիսասրահին մէջ կ'ունենար իր առաջին ելոյթը՝ խաղալով Արթիւր Միլըրի «Սալեմի վկուկները»:

Այսօր «Լեւոն Շանթ» թատերախումբը դարձեալ կը ներկայանայ հանրութեան՝ «Սալեմի վկուկները» թատերախաղով: Այս առթիւ հարցականներ կը ստեղծուին մեր մտքին մէջ. ինչո՞ւ 17 ամիս ետք Վարուժան Խտըշեան կը բեմադրէ միեւնոյն թատերախաղը, ինչո՞ւ այսչափ շուտ առիթ կու տայ հանրութեան բաղդատական մը ընելու տոյն թատերախաղի հին ու նոր բեմադրութիւններուն միջեւ. խումբը պիտի կարենա՞յ խաղարկութեան զգալի տարբերութեամբ մը ներկայանալ հանրութեան եւ արդարացնել այս գիտակից կրկնութիւնը:

Խտըշեանի համար անշուշտ շատ աւելի դիւրին եւ ապահով պիտի ըլլար ձեռնարկել իր բեմերուն բոլորովին անծանօթ գործի մը ներկայացման, ուր թատերախաղի նիւթին բերած հետաքրքրութիւնը մեծապէս պիտի օժանդակէր ընդհանուր յաջողութեան: Սակայն 17 ամիս ետք ներկայացնելով միեւնոյն թատերախաղը՝ Խտըշեան իր խումբը ուղղակիօրէն եւ գիտակցաբար կը դնէ թատերական շրջանակներու կարծիքի դատաստանին առջեւ:

1968 մայիսին, երբ «Լեւոն Շանթ» թատերախումբը ներկայացուց «Սալեմի վկուկները», շատեր կանխապէս գտան Նման դժուարին թատերախաղի մը ներկայացումը՝ նորակազմ թատերախումբի մը կողմէ: Արդար Եր անոնց մտահոգութիւնը, որովհետեւ խումբին ուժերէն վեր Եր այդ թատերախաղին դերասանական եւ թեքնիք պահանջները գոհացնելը: Ճիշդ է, որ Խտըշեան գարմացուց մեզ՝ նորեկներէ կազմուած իր թատերախումբի ուժերէն վեր մակարդակի մը վրայ պահելով ներկայացման խաղարկութիւնը, սակայն այս չի նշանակեր, որ «Լեւոն Շանթ» թատերախումբը յաջողութեամբ խաղցաւ «Սալեմի վկուկները» թատերախաղը:

1968 մայիսի առաջին ելոյթէն մինչեւ 1969 ապրիլ, այսինքն՝ մինչեւ Դ. Իփսէլի «Մեծ վարդէտ Սոլնէս» թատերախաղի ներկայացումը, «Լեւոն Շանթ» թատերախումբը ունեցաւ գնահատելի եւ ուրախալի յառաջիմութիւն մը՝ շնորհիւ բեմադրիչ Վարուժան Խտըշեանի լուրջ եւ յարատեւ աշխատանքներուն: Այս գոհացուցիչ յառաջիմութիւնը գլխաւորաբար արդիւնքն է Խտըշեանի հիմնած թատերական դասընթացքներուն (առաջինը՝ լիբանանահայ թատերական կէսնքին մէջ):

Մեկնելով այս արագ բարձրացումին առթած եզրակացութենէն՝ կը յուսանք, որ «Լեւոն Շանթ» թատերախումբն ու Վարուժան Խտըշեան պիտի կարենան այս անգամ յաջողութեամբ ներկայացնել Արթիւր Միլըրի «Սալեմի վկուկները»՝ արդարացնելով 17 ամիս ետք միեւնոյն թատերախաղը բեմադրելու այս փորձը:

Ա. Ա.

ՀԵՏԱԵՐԵՐԱԿԱՆ

ԲԱԽՏԱՐՈՐ ՆԿԱՐԻՉԸ

Անգլիացի նկարիչ Հոկարթ, որ բարոյական խորք ունեցող ծաղրանկարներու հնարիչն է, 32 տարեկան էր, երբ ամուսնացաւ: Բայց այս ամուսնութիւնը զարմանալի պարագաներու տակ երանաբեր եղաւ:

Աղջկան հայրը կը տարակուսէր, թէ Հոկարթ իր գործով կրնայ փարթամ կեանք մը ապահովել իր աղջկան: Բայց օր մը Հոկարթ շատ գեղեցիկ նկար մը գծեց եւ յանձնեց օրիորդին, որպէսզի գայն ցոյց տայ իր հօրը: Վարպետութիւնը յաջողեցաւ, հայրը տեսնելով այդ գեղարուեստական գլուխ-գործոցը՝ բացազանչեց:

«Արթի՛ս, ապրի՛ս, այլ մարդը, որ այս տեսակ գործեր կ'արտադրէ, առանց ժառանգութեան ալ կրնայ կիւն մը պահել:

Այս ըսելով, լայն բացաւ իր քսակը, որով Հոկարթ եւ իր կինը անհոգ ապրեցան:

ԱԼԵԱԹՐԱՅ ԿՐԶԻՆ

Թեքսասցի միլիոնատեր մը՝ Լամար Դենտ, Սան Ֆրանսիսքոյի քաղաքապետութեան դիմելով՝ խնդրած է, որ իրեն արտօնուի Սան Ֆրանսիսքոյի Նաահանգիստին մօտ գտնուող Ալքաթրազ փոքր կղզին Ամերիկեան անշրպետային ծրագրի յիշատակարանի վերածել:

Մինչեւ քանի մը տարի առաջ Ալքաթրազ կղզեակին մէջ կը գտնուէր մահուան կամ այլ ծանր պատիժներու դատապարտուածներու նշանաւոր բանտը:

Սան Ֆրանսիսքոյի քաղաքապետութիւնը կը մտածէ կամ զբօսաշրջական նպատակներու համար օգտագործել նշանաւոր կղզեակը եւ կամ ընդունիլ վերոյիշեալ միլիոնատերին առաջարկը:

ՓԻՐԵՐԸ ՀԱՆԴԱՐՏԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ուինստըրի կենդանաբանական պարտեզի պահակները նկատած են, որ օդանաւերու խլացնող աղմուկը կը զայրացնէ ու կը ջղայնացնէ պարտեզին փիղերը:

Չառնեք հանդարտեցնելու համար անոնց ականջներուն ձայնարգելներ անցուցած են:

ՊԱՆԵԱՆ ԳԵՐԱԴԱՍՏԱՆԸ

Աշխարհահռչակ Հայ Ճարտարապետներու Պալեան գերդաստանի պատմութիւնը տակաւին չէ գրուած: ԺԸ. դարու վերջին քառորդէն սկսած՝ մինչեւ ԺԹ. դարու վերջերը թրքահայ պատմութեան մէջ մեծահռչակ անուն մը թողած է իր բացառիկ ճարտարապետական արուեստովը հայ մեծ ընտանիք մը՝ Պալեան գերդաստանը, որուն ընդարձակ եւ մանրամասն պատմութեան ուսումնասիրութեան ձեռնարկած ենք:

1869-ին, Ֆրանսայի Էօժենի կայսրուհին Պոլիս կը հասներ, իր կայսերական պալատը կ'ըլլար Պալեան հանճարին արտադրած այնպիսի շքեղ կառուցում մը, որուն գեղեցկութենէն սքանչացած՝ Էօժենի կայսրուհին կը հարցնէր սուլթան Ապտիւլ Ազիզին, թէ ո՞վ է ճարտարապետը այս հրաշալի պալատին: Ու սուլթանը մատնանիշ կ'ընէր հայ հանճարները՝ Մարգիս պէ եւ Յակոբ Պէլ Պալեանները, որոնց հետ յետոյ կայսրուհին մտերմօրէն կը շրջագայի «Պէլէրպէյի» նորաշէն պալատին սրահներուն մէջ:

Կ'արժէ ճիգ ու քրտինք թափել հայ ցեղին, հայ ազգին պատիւ բերող այս գերդաստանի ամբողջական պատմութիւնը կերտելու համար:

Երախտագիտութեամբ պիտի յիշեմ պատմութեանս մէջ այն ամէն անձերը, որոնք օգնեցին, նպաստեցին որեւէ լուսաբանութիւն մը, պատմական ծանօթութիւն մը, լուսանկար մը, բլիշէ մը եւ այլն դրկելով մեզի:

Մեր փափքան է, որ գրքին էջերը զարդարուին ներկայիս ողջ եղող եւ Պալեան սերունդին վերաբերող ընտանիքներու ընտանեկան պատկերներով:

Հ. ԵՓԵՍ ՊՐՈՍԵԱՆ

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՖՈՒԹՊՈԼ
ԹԱՏԱՍՈՆ ՍՈՒՐԻ ԶՐԱՊԱՐԱԿԱԾ
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ



Լիբանանի ֆուբպոլի Ա. դասակարգի ախոյեանու- թեան մասնակցող խումբե- ռեն Թատամոն Սուր երեկ լի- բանսեան մարզական մա- մուլին եւ Լիբանանի ֆուբ- պոլի ֆետերասիոնին յոեց հաղորդագրութիւն մը։

Հարաւային ակումբը իր խոր մտահոգութիւնը յայտ- նեց Լիբանանի մէջ տիրող անխտիր վնաս կը հասնի։

Բնականաբար վնասուողներուն եւ տուժողներուն կարգին են նաեւ մարզական ակումբները։

Իւրաքանչիւր շաբաթավերջին տեղի ունենալիք ախոյ- եանութեան մրցումները պատճառ կը դառնան, որ ակումբները ծարաբեռնուին յաւելեալ պարտքերու տակ։

Առ այդ, Թատամոն Սուր Լիբանանի ֆուբպոլի ֆետե- րասիոնէն ակնկալեց, որ կարեկցելով բոլոր ակումբնե- րուն անխտիր, չեղեալ նկատէ Լիբանանի ֆուբպոլի ախոյեանութեան 2019-2020 տարեշրջանը։

2019-Ի ՊԷՅՐՈՒԹԻ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԱԹՈՒՆԸ՝
ՅԵՏԱԶԳՈՒԱԾ



Ինչպէս ծանօթ է, սկզբունքով վաղը՝ կիրակի, 10 նոյեմ- բերին, պէտք էր տեղի ունենար Պէյրուսի 2019-ի միջազ- գային մարաթոնը՝ տարիներու տովորութեան համաձայն։

Սակայն երկրինմէջ տեղի ունեցող զանգուածային ցոյ- ցերը ստիպեցին կազմակերպիչ միութիւնը, որ այս տար- ւան մարաթոնը յետաձգէ։

Բնականաբար, այս պայմաններուն մէջ կարելի պիտի չըլլար այսպիսի մարզական մեծ իրադարձութիւն մը կազ- մակերպել։

Յայտարարուեցաւ, որ մարաթոնին կայացման գծով մօտիկ ապագային պիտի յայտարարուի նոր թուական մը, անշուշտ եթէ Լիբանան վերագտնէ իր բնականոն կեան- քը։

ՃԱՏՐԱԿ

ԱՐՈՆԵԱՆ ՅԱՐԹԱՆԱԿ
ԱՐՁԱՆԱԳՐԵՅ 8-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄՆԻՆ



Պուրեշի մէջ (Հունգարիա) տեղի ունեցող արագ ճաւո- րակի «Կրանտ չէս Թուր»-ի մրցաշարքին ծիրին մէջ, երեկ տեղի ունեցան 7-րդ, 8-րդ եւ 9-րդ հանգրուանի հանդի- պումները։

7-րդ հանգրուանին հայրենի կրանտմասթըր Լեւոն Արոնեան սեւ քարերով հաւասարութիւն մը արձանագրեց ութրանցի Անթոն Զորոպուլի հետ, իսկ 9-րդ հանգրուա- նին՝ հոլանտացի Անիշ Կիրիի հետ։

8-րդ հանգրուանին իր կատարած ճակատումին, Արոն- եան սեւ քարերով յաղթեց ամերիկացի Ուեսլի Սոյին՝ 33-րդ շարժումին։

Արոնեան այժմ 10 կետով կը բաժնէ 2-4 դիրքերը։ Առա- ջին դիրքին վրայ է Զորոպով (12 կետով)։

ՓԼԱԹԻՆԻ ՄՏԱԴԻՐ Է ՂԱՏ
ԲԱՆԱԼ «ԵՈՒ. Է. ԷՖ. Ա.»-Ի ԴԵՍ

Ֆրանսական մամուլը հաղորդեց, որ «ԵՈՒ. Է. ԷՖ. Ա.»-ի նախկին ֆրանսացի նախագահ Միշել Փլաթինի որոշած է դատ բանալ «ԵՈՒ. Է. ԷՖ. Ա.»-ին՝ նկատի ունենալով, որ ան կազմակերպութենէն չէ ստացած իր աշխատավարձե- րը եւ պարգեւավճարները։

Նշուեցաւ, որ «ԵՈՒ. Է. ԷՖ. Ա.»-էն Փլաթինիի պահան- քած գումարը կը կազմէ 7 միլիոն եւրո։

Նշեցք, որ Փլաթինի առնուած էր հսկողութեան տակ՝ ամբաստանուելով կաշառակերութեան յանցանքով։

ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԸ
ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ԻՐ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝
ՄՐՅՈՒՄՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ



Ինչպէս ծանօթ է, 14 եւ 19 նոյեմբերին Լիբանանի ֆուբպոլի ազգային խումբը մրցումներ ունի կատարելիք Զաթար- 2022-ի մոնտիալին եւ Հի- նաստան-2023-ի Ասիոյ ֆուբ- պոլի ախոյեանութեան ծիրին մէջ։

Լիբանանի մրցակիցները յաջորդաբար պիտի ըլլան Հարաւային Զորեա եւ Հիւսի- սային Զորեա։

Հակառակ երկրին մէջ տի- րող դժուար պայմաններուն եւ կատարուող համաժո- դովորային ցոյցերուն, Լիբա- նանի ֆուբպոլի ֆետերա- սիոնը կարջած կը մնայ այս երկու մրցումները կատարե- լու Պէյրուսի մէջ։ Այս ուղղու- թեամբ ֆետերասիոնը անը- րաժեշտ բոլոր պատրաստութիւնները կը տեսնէ։

Այս գծով ֆետերասիոնը յատուկ ժողով- հանդիպում մը ունեցաւ Լիբանանի երի- տասարդութեան եւ մարմնակրթութեան նախարարութեան, ինչպէս նաեւ Ներքին ապահովութեան ուժերուն հետ՝ իիւր



Հարաւային Զորեայի կազմը

տի փոխադրեն այլ երկիր կամ անոնց թուականները պիտի յետաձգեն։

Ոչ պաշտօնական տեղեկութիւններու հիմամբ, Հարաւային Զորեայի պատուի- րակութիւնը չորեքշաբթի, 13 նոյեմբերին, յատուկ օդանաւով մը պիտի հասնի Լիբա- նան՝ այս մրցումը կատարելու համար։

«ԷՆ. ՊԻ. ԷՅ.»
ՍՓԸՐԶ ՅԱՐԹԵՅ ՕԶԼԱՅՈՍԱՅԻՆ,
ԻՍԿ ԶԻԹ՝ ՍԱՆԶԻՆ

«ԷՆ. ՊԻ. Էյ.»-ի պաքեթպոլի ախոյեա- նութեան ծիրին մէջ, երեկ տեղի ունեցան չորս ճակատումներ։

Սան Անթոնիօ Սփըրզ, որ հիւրընկալեց Օքլահոմա Սիթին, արձանագրեց 121-112 արդիւնքով յաղթանակ մը։ Յաղթական կազմէն Լամարբուս Ալտրիճ Նշանակեց 39 կետ, մինչ Օքլահոմայէն Տանիօ Կալիւա- րի՝ 27 կետ։

Ֆետիքսի մէջ, Սանզ 124-108 արդիւն- քով պարտութիւն մը կրեց իր հիւրէն՝ Մա- յեմի Հիթէն։ Ծիմի Պաթլըր (Հիթ) Նշանակեց 34 կետ։

Պոսթըն Սելթըքս յաղթական վերադար- ձաւ Շարլոթ Հոռնէթցի դաշտէն, ուր ար- ծանագրեց 108-87 արդիւնքով յաղթանակ մը։

Վերջապէս, չորրորդ եւ վերջին մրցու- մին, Լոս Անճելըս Բլիքըրզ հիւրընկալեց Փորթլենտ Թըյէլ Պլէզըրըզ։

Մրցումը վերջ գտաւ Բլիքըրզի յաղթա- նակով (107-101)։

Ստորեւ՝ շաբաթավերջի մրցումներուն յայտագիրը (փակագիծերուն մէջ Նշուած են խումբերուն արձանագրած արդիւնքնե- րը. Նախ յաղթանակ, ապա՝ պարտութիւն).

ՇԱԲԱԹ
Օրլանտօ Մեճիք (2-6) - Մեմֆիս Կրիզ- լիզ (2-5)

Ուաշինկթըն Ուիզըրտծ (2-5) - Բլիվլենտ Զաւալիըզ (2-5)
Ինտիանա Փէյսըրզ (4-4) - Տիթթոյիթ Փիսթընզ (4-5)
Աթլանթա Հոքս (3-4) - Սաքրամենթօ Բլինկ (2-6)
Միւնսթըա Վուլվզ (4-3) - Կոլտըն Սթէյթ Ուորիըրզ (2-6)
Նիւ Օրլինզ (1-6) - Թորոնթօ Ռեփըրզ (5-2)
Տալաս Մավըրիքս (5-2) - Նիւ Եորք Նիքս (1-7)
Եութա Ճեզ (5-3) - Միլուոքի Պաքս (6-2)
Տենվըր Լակլէթց (5-2) - Ֆիլատելֆիա Սիքսըրզ (5-2)
Փորթլենտ Թըյէլ Պլէզըրզ (3-5) - Պրուք- լին Նեթց (3-4)
Լոս Անճելըս Լէյքըրզ (6-1) - Մայեմի Հիթ (6-2)
ԿԻՐԱԿԻ
Սան Անթոնիօ Սփըրզ (5-3) - Պոսթըն Սելթըքս (6-1)
Շարլոթ Հոռնէթց (4-4) - Նիւ Օրլինզ (1- 6)
Օքլահոմա Սիթի (3-5) - Կոլտըն Սթէյթ Ուորիըրզ (2-6)
Շիքակօ Պուլզ (3-6) - Հիուսթըն Ռոքեթց (5-3)
Մեմֆիս Կրիզլիզ (2-5) - Տալաս Մավը- րիքս (5-2)

Ա. ՄԷ. ՄԻԼԱՆ Կ՝ՈՒԶԷ
ԶԵՈՔ ԶԳԵԼ ՌԱԶԻԹԻԶԸ

Իտալական մամուլին հա- մաձայն, մարզիկներու ձմեռ- նային փոխանցման ընթաց- քին, Ա. ՄԷ. Միլան կ'ուզէ ամէն գնով իր կազմին միաց- նել Պարսելոնայի եւ Կրուպէթի ֆուբպոլի ազգա- յին խումբի միջնապահ Իվան Ռաքիթիչը։



Նշուեցաւ, որ 31 տարե- կան ֆուբպոլիստին ստո- րագրութիւնը ձեռք ձգելու համար, իտալական ակումբը պատրաստ է Պարսելոնային վճարելու 30 միլիոն եւրո։

Ռաքիթիչ ղէմ չէ Պարսելոնայէն հեռանալու գաղափարին, որովհետեւ անոր ժամա- նակ չի տրուիր մրցումներու մասնակցելու համար։

Նշուեցաւ նաեւ, որ Ռաքիթիչով հետաքրքրուած են նաեւ Աթլէթիքօ Մատրիտ եւ Ին- թեր Միլան։

ԵՒՐՕ-2020

ՀԱՅԱՍՏԱՆ - ՅՈՒՆԱՍՏԱՆ
ՄՐՅՈՒՄԻՆ ՏՈՍՄԵՐՈՒՆ ԳԻՆԸ

Երեկ՝ ուրբաթ, 8 նո- յեմբերին, սկսան վա- ճառուիլ Եւրօ-2020-ի ֆուբպոլի ախոյեանու- թեան գտումի մրցա- շարքին ծիրին մէջ տե- դի ունենալիք Հայաս- տան - Յունաստան մրցումին տոմսերը։

Հայաստանի ֆուբ- պոլի ֆետերասիոնին պաշտօնական կայ- քը յայտնեց, որ ամէնէն աժան տոմսը կ'արժէ 1000 դրամ (հիւսիսային եւ հարա-



ւային թրիակին)։ Արե- լելեան թրիակինին կողմի բաժնիին գինն է 3000 դրամ, իսկ կեդ- րոնի բաժնիին գինը՝ 5000 դրամ։

Արեւմտեան թրի- ակինին կողմի բաժի- նին գինն է՝ 7000 դրամ, իսկ կեդրոնա- կան բաժնիինը՝ 9000 դրամ։

Այս մրցումը տեղի պիտի ունենայ 15 նո- յեմբերին։

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹՊՈԼ. ՇԱԲԱԹԱՎԵՐԶԻ
ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒՆ ՅԱՅՏԱԳԻՐԸ.

- ԱՅՍՕՐ՝ ՊԱՅԵՐՆ ՄԻՆԻՆ -
ՊՈՐՈՒՄԻԱ ՏՈՐԹՄՈՒՆՏ
- ՎԱՐԸ՝ ԼԻՎԵՐՓՈՒԼ - ՄԱՆԶԵՍԹԵՐ
ՄԻԹ ԵՒ ԵՌԿԵՆԹՈՒՄ - Ա. ՄԷ. ՄԻԼԱՆ



Այս շաբաթավերջին կատարուելիք եւրոպական ֆուբ- պոլի ախոյեանութեան մրցումներուն ծիրին մէջ, կարգ մը ճակատումներ պիտի ըլլան բաւական հետաքրքրական եւ պիտի գրաւեն լուսարձակները։

Սկսելով Անգլիայէն, գագաթի ճակատումին, Լիվըր- փուլ բաւական կարեւոր մրցում մը ունի կատարելիք, երբ հիւրընկալէ Մանչեսթըր Սիթին։

Սպանիոյ մէջ, Պարսելոնայի եւ Ռեալ Մատրիտի մրցա- կիցները պիտի ըլլան համեմատաբար աւելի տկար։

Իտալիոյ մէջ, գագաթի ճակատում մը պիտի ըլլայ Եու- վենթուս - Ա. ՄԷ. Միլան մրցումը, իսկ Գերմանիոյ մէջ՝ Պա- յերն Միւնիխ - Պորուսիա Տորթմունտ հանդիպումը։



Ստորեւ՝ շաբաթավերջի մրցումներուն յայտագիրը (ժամերը՝ Պէյրուսի ժամանակացոյցով. փակագիծերուն մէջ Նշուած են խումբերուն գրաւած դիրքերը).


ԱՆԳԼԻԱ. 12-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄՆ.	ԺԱՄ
ՇԱԲԱԹ	
Զելսի (4) - Բրիսթօլ Փալաս (9)	14:30
Պըրնլի (14) - Ռեյսթ Համ (13)	17:00
Նիւքասթլ (15) - Պուրնըմաութ (7)	17:00
Սաութհեմփթըն (18) - Էվըրթըն (17)	17:00
Թորթեհամ (11) - Շեֆիլտ Եունայթըտ (6)	17:00
Լայպըր Սիթի (3) - Արսենալ (5)	19:30
ԿԻՐԱԿԻ	
Մանչեսթըր Եունայթըտ (10) - Պրայթըն (8)	16:00
Վուլվզ (12) - Ասթօն Վիլա (16)	16:00
Լիվըրփուլ (1) - Մանչեսթըր Սիթի (2)	18:30
ՄԻԼԱՆ. 13-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄՆ.	
ՇԱԲԱԹ	
Ալանս (16) - Ռեալ Վալադոլիտ (12)	14:00
Վալենսիա (13) - Կրանաւա (6)	17:00
Եյպար (14) - Ռեալ Մատրիտ (2)	19:30
Պարսելոն (1) - Սելթա Վիզ (18)	22:00
ԿԻՐԱԿԻ	
Մարլբըա (17) - Վիարեալ (8)	13:00
Աթլէթիքօ Պիլպօ (10) - Էվլանթէ (11)	15:00
Աթլէթիքօ Մատրիտ (4) - Եսփանիոլ (19)	17:00
Կեթաֆէ (7) - Օսասունա (9)	19:30
Ռեալ Պեթիս (15) - Սելիլլա (5)	22:00

ԻՏԱԼԻԱ. 12-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄՆ.	ԺԱՄ
ՇԱԲԱԹ	
Պրեշիա (19) - Թորինօ (14)	16:00
Ինթեր Միլան (2) - Վերոնա (9)	19:00
Նափոլի (7) - Ծենովա (17)	21:45
ԿԻՐԱԿԻ	
Զալիարի (6) - Ֆիորենթինա (8)	13:30
Լացիօ Ռոմա (4) - Լէչէ (16)	16:00
Սամտորիա (18) - Աթալանթա (5)	16:00
Ուտինեզէ (11) - ՍՓԱԼ (20)	16:00
Փարմա (10) - Ա. Էս. Ռոմա (3)	19:00
Եուվենթուս (1) - Ա. ՄԷ. Միլան (12)	21:45

ԳԵՐՄԱՆԻԱ. 11-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄՆ.	ԺԱՄ
ՇԱԲԱԹ	
Մայնց-05 (15) - Ինիլին Պերլին (14)	16:30
Շալքէ (6) - Ֆորթուա Տիւսելտովֆ (13)	16:30
Հերթա Պերլին (11) - Լայպցիկ (3)	16:30
Փատերպոն (18) - Օլգապուրկ (16)	16:30
Պայերն Միւնիխ (4) - Պորուսիա Տորթմունտ (2)	19:30
ԿԻՐԱԿԻ	
Մեոնշնկկատպախ (1) - Վերտըր Պրեմըն (12)	14:30
Վոլֆսպուրկ (8) - Պայեր Լեւերքուզըն (10)	16:30
Ֆրայպուրկ (5) - Այնթրախթ Ֆրանքֆորթ (7)	19:00

ՖՐԱՆՍԱ. 13-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄՆ.	ԺԱՄ
ՇԱԲԱԹ	
Պրետթ (9) - Փարիզ Սեն Շերմեն (1)	18:30
Մոնպըօ (15) - Տիօն (16)	21:00
Լիլ (5) - Մետ (18)	21:00
Սթրազպուրկ (17) - Նիմ (20)	21:00
Ռեմ (7) - Անժէ (2)	21:00
ԿԻՐԱԿԻ	
Ռենն (14) - Ամիեն (12)	16:00
Նանթ (3) - Սենթ Էթիեն (8)	18:00
Մոնփելիէ (11) - Թուլուզ (19)	18:00
Մարսէյ (4) - Լիոն (10)	22:00

ԷՐՏՈՂԱՆԻ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՆ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ ՈՒԱՇԻՆԿԹԵՆԻ ՄԵՋ ԹՈՒՐԵԻՈՅ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ԲՈԼՈՐ ԿԵԴՐՈՆՆԵՐՈՒՆ ՄԵՋ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԿՑԻԿՆԵՐ ՏԵՐԱԴՐՈՒՄԸ ԵՆ



Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայյիփ Էրտողանի՝ Ուաշինգթոն կատարելիք այցելութեան նախօրեակին՝ թրքական դեսպանատունը վերահսկողութեան նոր տեսախցիկներ տեղադրած է Միացեալ Նահանգներու մայրաքաղաքի տարածքին մէջ գտնուող իր բոլոր դիւանագիտական ներկայացուցչութիւններուն մօտ:

Այս մասին կը հաղորդէ Ամերիկայի Հայ դատի յանձնախումբը՝ յիշեցնելով, որ ասիկա Էրտողանի առաջին այցելութիւնն է Ուաշինգթոն՝ մայիս 2017-ին տեղի ունեցած միջադէպէն ետք, երբ Թուրքիոյ նախագահի թիկնապահները յարձակում գործած էին հայ, քիւրտ եւ ամերիկացի խաղաղ ցուցարարներուն դէմ:

Յիշեցնենք, որ Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու տան կողմէ Հայոց ցեղասպանութիւնը ճանչցող բանաձեռի որոշեցումէն ետք Էրտողան սպառնացած էր, որ կրնայ ջնջել Միացեալ Նահանգներ այցելութիւնը, որ տեղի պիտի ունենայ 13 նոյեմբերին՝ Միացեալ Նահանգներու նախագահ Տանըլտ Թրամփի հրաւերով:

«ԹՈՒՐԵԻՎԱՆ ՕԹԱՆ-Ի ՄԵՋ ԿԱՐԵՒՐԱԳՈՅՆ ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐԷՆ ՄԵԿՆ Է»

Կ'ԸՍԵ ՄԱՍՍ



Գերմանիոյ արտաքին գործոց նախարար Հայքո Մաաս Լայփցիկի մէջ Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Մայք Փոմփեյի հետ իր հանդիպումէն ետք յայտարարեց, որ Գերմանիան ու Միացեալ Նահանգները Թուրքիան կը նկատեն ՕԹԱՆ-ի կարեւոր դաշնակից մը եւ կը հաւատան, որ կարեւոր է Անգարայի հետ երկխոսութիւնը շարունակել:

«Քննարկեցինք Թուրքիոյ հետ ստեղծուած կացութեան տարբեր երեսները, մեր ունեցած բոլոր տարակարծութիւնները: Համաձայն գտնուեցանք, որ հակառակ տարակարծութիւններուն, Թուրքիան ՕԹԱՆ-եան կարեւոր գործընկեր մըն է, ուստի պէտք է մեր երկխոսութիւնը շարունակել», ըսաւ գերմանական դիւանագիտութեան պետը:

«Թուրքիան ՕԹԱՆ-ի մէջ կարեւորագոյն դաշնակիցներէն մէկն է», նշեց ան՝ շեշտելով. «Թուրքիան ՕԹԱՆ-ի անդամներէն մէկն է եւ այդպէս ալ պիտի մնայ: Ան դաշինքին մէջ կարեւորագոյն առանցքային գործընկերներէն մէկն է»:

Մաաս աւելցուց, որ Փոմփեյի հետ ընկալած են հիւսիսային Սուրիոյ մէջ տիրող կացութիւնը եւ շեշտած շրջանին մէջ մնալուն զինադադարի հաստատման կարեւորութիւնը:

ԶԻՆԱՍՏԱՆ ՊԻՏԻ ԶՄԻԱՆԱՅ ԱՊԱՉԻՆՄԱՆ ՇՈՒՐՋ ՌՈՒՄԻՈՅ ԵՒ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԲԱՆԱԳՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Չինաստան պատրաստ է կրճատելու իր հիւլեական ներուժը, սակայն պէտք չկայ սպասելու, որ Փեքին միանայ ապագինման շուրջ Մոսկուայի եւ Ուաշինգթոնի բանակցութիւններուն: ԹԱՍՍ լրատու գործակալութիւնը կը հաղորդէ, որ այս մասին յայտարարած է Չինաստանի արտաքին գործոց նախարարութեան սպառազինութիւններու վերահսկողութեան բաժնամուկի տնօրէն Ֆու Յու:

«Չինաստան չի խուսափիր սեփական պարտականութիւններու կատարումէն, չի խուսափիր պատասխանատուութենէն: Մենք պատրաստ ենք կրճատելու հիւլեական զինանոցները: Եթէ միւս երկիրները իրենց զինանոցները պահպանեն մինչեւ Չինաստանի մակարդակ, մենք պատրաստ ենք միանալու այդ հողովոյթին», ըսած է դիւանագետը:

«Սակայն իրատեսական չէ ակնկալել, որ Չինաստանը միանայ երկկողմ (ապագինման շուրջ Ռուսիա-Միացեալ Նահանգներ) բանակցութիւններուն», աւելցուցած է ան:

«ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ ՊԵՏԸ Է ՀՐԱԺԱՐԻՆ ԻՐԱՆԻ ԴԵՍ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԷՆ ԵՒ ՃՆՇՈՒՄՆԵՐԷՆ»


Կ'ԸՍԵ ԶԻՆԱՍՏԱՆ

Չինաստանի Միչին Արեւելքի հարցերով յատուկ բանագլաց Զժայ Յգիւն յայտարարած է, որ Միացեալ Նահանգներ պէտք է հրաժարին Իրանի դէմ միակողմանի պատժամիջոցներէն եւ ճնշումներէն: Այս մասին կը հաղորդէ «ՌԻԱ Նովոսթի» լրատու գործակալութիւնը:

Միացեալ Նահանգներ պատժամիջոցներ հաստատած են Իրանի 9 քաղաքացիներու՝ ներառեալ Իրանի գերագոյն հոգեւոր պետի որդիին եւ Իրանի խլամական հանրապետութեան զինեալ ուժերու սպայակոյտի պետին դէմ:

«Չինական կողմը կը գտնէ, որ Միացեալ Նահանգներ պէտք է հրաժարին այդ գործելաոճերէն, միակողմանի պատժամիջոցներէն եւ Իրանի դէմ ծայր աստիճան ծանր ճնշումէն, որովհետեւ միայն այդպէս կարելի է վերադառնալ խնդիր լուծման ելակետային ճիշդ ճամբուն», մամլոյ ասուլիսի ընթացքին յայտարարած է չին դիւանագետը:

Յգիւն նշած է, որ Միչին Արեւելքի մէջ



տանիան, Գերմանիան, Չինաստանը, Ֆրանսան եւ Ռուսիան յայտարարեցին Գործողութիւններու համապարփակ եւ միացեալ ծրագիրի մասին: Համաձայնագիրը կ'ենթադրէր պատժամիջոցներու ջնջում եւ Իրանի կողմէ հիւլեական ծրագիրի սահմանափակում:

Համաձայնագիրը, սակայն, երեք տարւան կեանք չունեցաւ: Միացեալ Նահանգներ 2018-ին յայտարարեց համաձայնագիրը միակողմանիօրէն լքելու եւ Իրանի խլամական հանրապետութեան դէմ խիստ պատժամիջոցներու վերականգնման մասին:

ԳԵՐՄԱՆԻԱ ԿԸ ԴԱՐԵՑՆԷ ԹՈՒՐԵԻՈՅ ԶԵՆԵԻ ՎԱՃԱՌԸ

Գերմանիոյ արտաքին գործոց նախարար Հայքո Մաաս անդրադարձած է Թուրքիոյ դէմ գէնքի վաճառքի արգելք կիրարկելու հաւանականութեան: Այս մասին կը հաղորդէ թրքական «Հապեր7» կայքը:

Մաաս Սուրիոյ հիւսիսը Թուրքիոյ զինուորական գործողութիւնները բնութագրած է իբրեւ միջազգային օրէնքը խախտող բռնագրաւում:

Գերմանիոյ արտաքին գործոց նախարարը նաեւ նշած է, որ Անգարա կատարած այցելութեան ընթացքին Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մեւլութ Չաւուշօղլուին կոչ ուղղած է թրքական զօրքերը Սուրիոյ տարածքէն դուրս բերելու:

Մաաս յայտարարած է նաեւ, որ Գերմանիան կը դադրեցնէ գէնքի մատակարարումը Թուրքիոյ, թէեւ գէնքի վաճառքի արգելքի մասին պաշտօնական որոշում տակալին գոյություն չունի: Ամէն պարագայի, Թուրքիոյ հետ գէնքի մատակարարման նոր համաձայնագիրներ պիտի չկնքուին, իսկ գոյութիւն ունեցողները կրնան



ջնջուի:

Գերմանական դիւանագիտութեան պետը նշած է, որ ՕԹԱՆ-ի անդամ Թուրքիոյ նկատմամբ չափազանց կարծր մօտեցումները կրնան զինքն որդեկ փնտնելու նոր գործընկերներ, ինչպէս՝ Ռուսիան: Ատիկա, ըստ Մաասի, մարտավարական սխալ պիտի ըլլայ:

ԱՄՏՐԻԱՆ ՊԱՏՐԱՍ Է ՀԱՐԹԱԿ ՏՐԱՄԱԴԴԵԼՈՒ ՀԻՒԼԵԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԻՆ ՇՈՒՐՋ ԲԱՆԱԳՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Աւստրիան միշտ պատրաստ է հարթակ տրամադրելու իրանեան հիւլեական ծրագիրին վերաբերեալ Գործողութիւններու միացեալ համապարփակ ծրագիրին շուրջ բանակցութիւններուն համար: «ՌԻԱ Նովոսթի» լրատու գործակալութիւնը կը հաղորդէ, որ այս մասին յայտարարած է Աւստրիոյ արտաքին գործոց նախարարութեան ապագինման, սպառազինութիւններու վերահսկման ու չտարածելու հարցէն:

ՀՈՒՆԳԱՐԻՈՅ ՄԵՋ ԲՈՂՈՔԻ ՑՈՅՑԵՐ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԵՆ ԷՐՏՈՂԱՆԻ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՆ ԴԵՍ

7 նոյեմբերին, Հունգարիոյ վարչապետ Վիթթօ Օրպանի հրաւերով Պուտսկէշը այցելած է նախագահ Ռեճեփ Թայյիփ Էրտողան: Այս մասին կը հաղորդէ ռուսական «Կազէթա» կայքը:

Մինչ վարչապետ Օրպան Էրտողանի համար ջերմ ընդունելութիւն կազմակերպած էր, հազարաւոր մարդիկ դուրս եկած են Պուտսկէշի փողոցներ՝ բողոքելու համար Էրտողանի այցելութեան դէմ եւ աջակցելու Սուրիոյ քիւրտներուն, որոնք դէմ Թուրքիան գործադրած է «հաղաղութեան աղբիւր» կոչուող զինուորական գործողութիւնը:

Բողոքի ցոյցերը, սակայն չեն խոչընդոտած կողմերուն հանդիպումը: Անոնք մասնակցած են թուրք-հունգարական մարտավարական խորհուրդի նիստին եւ ընկալած են երկկողմանի յարաբերութիւններն ու միջազգային զարգացումները:

Էրտողան անգամ մը եւս առիթը չէ փախցուցած Եւրոպական Միութեան սպառնալու գաղթականներուն առջեւ սահմանները բանալու հարցով, եթէ Եւրո-



պական կողմը շարունակէ քննադատելու Սուրիոյ նկատմամբ Թուրքիոյ քաղաքականութիւնը:

«Օգնութիւն պիտի ստանանք թէ ոչ, մենք ամէն պարագայի պիտի օգնենք մեր հիւրերուն, սակայն որոշ չափով: Մենք կրնանք յայտնուիլ իրավիճակի մը մէջ, երբ ստիպուած պիտի ըլլանք բանալ սահմանները: Այս մասին ես նախապէս ալ նշած էի: Մենք մեծ ծրագիր մշակած ենք սուրիացիներուն օգնելու համար, սակայն մենք չենք կրնար զայն առանձին իրականացնել», ըսած է Էրտողան:

«ԵԹԷ ԿԱՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ ՄԸ, ՈՒՐ ՊԵՏԸ Է ԽՕՍՈՒԻ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ, ԱՊԱ ԱՆԻԿԱ ԹՈՒՐԵԻՈՅ ԱՉԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՆ Է»

Կ'ԸՍԵ ՓԱՅԼԱՆ



Եթէ կայ խորհրդարան մը, ուր պէտք է խօսուի Հայոց ցեղասպանութեան մասին, ապա անկախ Թուրքիոյ Ազգային ժողովն է: «Արմէնփրէս» կը հաղորդէ, որ այս մասին Թուրքիոյ խորհրդարանին մէջ՝ յառաջիկայ տարուան պետական պիւտճէի նախագիծի քննարկումներուն ընթացքին յայտարարած է Թուրքիոյ խորհրդարանի անդամ Կարո Փայլան:

«Նախքան 1915 թուականը այս հողերուն վրայ՝ Սփարթայի, Մերսինի, Ատանայի, Տրապիզոնի, Տիգրանակերտի, Պուրսայի մէջ հայեր կը բնակէին, եւ այս երկրին մէջ իւրաքանչիւր հինգէն մէկը հայ էր, իսկ հիմա եթէ հաւաքուիք մէկ մարզադաշտ չենք կրնար լեցնել: Անշուշտ, չգործիշացանք: Տեղի ունեցաւ մեծ աղէտ, որ դժբախտաբար, 104 տարիէ ի վեր կը ժխտենք ուրացման քաղաքականութեամբ, կը մերժենք խօսիլ այդ մասին:

«Տեսք, այլ խորհրդարանները կը խօսին այդ մասին, իսկ մենք կ'ըսենք՝ թող չխօսին: Լիւրի մասին, որ կը վերաբերի այս շրջանին, թող խօսուի նոյնիսկ այս շրջանին մէջ: Եթէ այս աշխարհի վրայ կայ խորհրդարան մը, ուր այս մասին պէտք է խօսուի, անկախ Թուրքիոյ Ազգային մեծ ժողովն է, որովհետեւ մենք այս հողերուն զաւակներն ենք», յայտարարած է Փայլան:

«ՕԹԱՆ-Ի «ՈՒՐԵՐԸ ՄԱՀԱՅԱԾ» Է»

Կ'ԸՍԵ ՄԱՐՈՆ



Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոն ՕԹԱՆ-ի մասին խօսելու ընթացքին յայտարարած է, թէ դաշինքին «ուղեղը մահացած է»:

«Պի.Պի.Սի.» կը հաղորդէ, որ Մաքրոնի համաձայն, ատոր պատճառը Հիւսիսատլանտեան դաշինքի գլխաւոր երաշխաւորին՝ Միացեալ Նահանգներու հաւատարմութեան թուլացումն է:

Ֆրանսայի նախագահը «Տը Էքոնոմիսթ»-ին տուած հարցազրոյցին մէջ ընդգծած է նախքան ամերիկեան ուժերը Սուրիոյ հիւսիսէն հեռացնելը ՕԹԱՆ-ի հետ բանակցելու հարցին մէջ Միացեալ Նահանգներու ձախողութիւնը:

Ան հարցականի տակ դրած է ՕԹԱՆ-ի հաւատարմութիւնը հաւաքական անվտանգութեան:

Գերմանիոյ վարչապետ Անկելա Մերքել արձագանգած է՝ նշելով, որ համաձայն չէ Մաքրոնի «այդ կտրուկ խօսքերուն»:

ՕԹԱՆ-ը, որ յառաջիկայ ամիս Լոնտոնի մէջ գումարելի վեհաժողովի ընթացքին պիտի նշէ իր կազմաւորման 70-ամեակը, իր կարգին արձագանգած է Մաքրոնի խօսքին՝ յայտարարելով, որ կառոյցը կը շարունակէ հզօր մնալ:

«ՕԹԱՆ-Ի ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՄԱՐՈՆԻ ԽՕՍԸ ՈՍԿԻ Է ԵՒ ԽՈՐԸ Կ'ԱՐՏԱՑՈՒԷ»

Կ'ԸՍԵ ՉԱԽԱՐԿԱ

Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութեան բանբեր Մարիա Զախարովա Մաքրոնի խօսքը նկատեց «ոսկի»:

«Ատիկա ոսկի խօսք է, ճշմարտութիւն մըն է եւ կ'արտացոլէ խորը, անկախ յստակ բնութագրում մըն է ՕԹԱՆ-ի ներկայ իրավիճակին: Սակայն նշեմ միայն մէկ դիտողութիւն, թէեւ բազմաթիւ դիտողութիւններ կան: Եւրոպան ճիշդ ինչպէ՛ս կրնայ իր ճակատագիրին տերը ըլլալ. 20-րդ դարուն մէջ երկու համաշխարհային պատերազմ, 19-րդ դարուն եւ անկէ առաջ պատմութեան ընթացքին անվերջ պատերազմ եւ Նիզակներու ու սուրի ճամբով գաղափարախօսութեան արտածում եղած է»:

ՎԱՐՁՈՒ Է

Վարձու սենեակ՝ բոլոր յարմարութիւններով, Ազգային խորհուրդի շէքեր: Դիմել՝ հեռ. 71-160085:

ԳՐԱԴՈՒՄԸ ՕՐ
ԹՈՂՈՅ ԲՈՅՆ
ՆՈՐ ՏԱՐՈՒՆ
ՏՕՆԱՎԱՃԱՌ
10 ՀԱՅՏԵՄԲԵՐ 2019